

ՅԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԻՐԱՆ  
№ 3 ԳԻՏԱ.-ՊՈՊՈՒԼՅԱՐ ՍԵՐԻՍ, № 3

Ա. ԻՌՎՍԻՅԱՆ

ԱԿՆԱՐԿ ՀԻՆ ՀԱՅԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ  
Մ Ա Ս Ի Ն

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԳՈՒԹՅՈՒՆ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն Ի Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ա Մ Ա Լ Ս Ա Ր Ա Ն

№ 3 Գ Ի Տ Ա - Պ Ո Պ Ո Ւ Լ Յ Օ Ր Ս Ե Ր Ի Ս. № 3

37 (47.925)(09)

Մ-91

Ա. Մ Ո Վ Ս Ի Ս Յ Ա Ն

ՄՏՈՒԳՎԱՄ Է 1961 թ.

ԱԿՆԱՐԿ ՀԻՆ ՀԱՅԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ  
Մ Ա Ս Ի Ն

~~3571~~



A  $\frac{\bar{1}}{11957}$

## ԱԿՆԱՐԿ ՀԻՆ ՀԱՅԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայ ժողովրդի կուլտուրայի հարուստ պատմութեան մեջ փոքր տեղ չի բռնում այդ ժողովրդի դաստիարակութեան և կրթութեան գործը:

Սակայն մեր գրականութեան մեջ շատ քիչ են մշակված այդ հարցերը, իսկ յեղած ուսումնասիրութեաններն էլ շատ թերի յեն ու միակողմանի: Ուսումնասիրողներից վճռանք, հենվելով մեկ կամ մի քանի պատմիչների առանձին արտահայտութեանների վրա, անհիմն կերպով յեզրակացրել են, վոր իբր թե հայերը դեպի ուսման և կրթութեան գործը «անտարբեր են յեղել»:

Նրանցից մի քանիսը գտնում են, վոր 5-րդ դարից հետո հայերը չեն ունեցել մասսայական ժողովրդական տիպի դպրոցներ և յեղածներն էլ վանքերին կից լինելով՝ զուտ վանական-հոգևորական տիպի դպրոցներ էյին, վորոնց պահպանութեան նախապատմութեանը վերագրվել և ամբողջապես հոգևորականութեանը: Դուրս և դալիս, վոր 5-րդ դարից հետո ժողովուրդը և պետութեանը հայ դպրոցների նկատմամբ յեղել են անտարբեր:

Դպրոցի ժողովրդական լինելը չի վորոշվում նրա վայրով, — վանքումն է, թե վանքից դուրս, պետական է, թե ծխական, այլ իր բովանդակությամբ, աշակերտների կազմով, իր մասսայական բնույթով: Փաստը այն է, վոր միջին դարերի հայ մասսայական դպրոցները ծխական տիպի դպրոցներն էյին, վորոնք սակայն վոչ միայն յեկեղեցիներին, այլև վանքերին կից էյին:

Վանքերի մեջ պատասխարած դպրոցները, այդ ուսումնասիրողների կարծիքով, ձեռք քաշեցին արտաքին գիտութեաններից ու սկսեցին զբաղվել միայն Ավետարանի, Հին և Նոր Կտակարանների մեկնութեաններով:

Հայ հին կրթութեան և դաստիարակութեան մասին նման

կարծիքները վոչ մի հիմք չունեն և թանձր քողի տակ են պահուում մեր ժողովրդի վարած պայքարը հենց իր կրթության ու դաստիարակության գործի համար:

Փաստերը ցույց են տալիս, վոր ֆեոդալական պետության կողմից դպրոցական կրթության գործը հանձնվեց հոգևորականությանը և սկզբում քրիստոնեությունն ավելի ամրապնդելու նպատակով դպրոցները մղվեցին դեպի վանքերը, իսկ հետագայում՝ մշտական պատերազմների արհավիրքի հետևանքով, այդ դպրոցներն ավելի յերկար ժամանակով մնացին վանքերի չորս պատերի մեջ: Սակայն վանքերում յեղած նախկին ժողովրդական դպրոցները ամբողջապես չկորցրին իրենց դեմքը, չվերածվեցին ամբողջապես հոգևոր կազրեր պատրաստող հիմնարկներ: Այդ դպրոցներից շատերի մեջ մնացին ժողովրդական դպրոցի վորոշ հատկություններ:

Վոր դպրոցների դպալի մասը վանքերին կից ե յեղել՝ այդ ժխտել չի կարելի, բայց անհնար ե պատկերացնել պետության ազդեցությունից գուրս դպրոց: Վոր այդ դպրոցներում անցնում եյին կրոնական գիտելիքներ՝ այդ ժխտել չի կարելի, բայց մոռանալ յեղած բազմաթիվ վկայությունները, վոր այդ դպրոցներում դասավանդվում եյին զանազան այլ առարկաներ, ուսուցանում եյին արտաքին գիտություններ՝ այդ ևս չի կարելի ժխտել: Վանքին կից, վանքի բակում կամ նրա սահմաններում գտնվող դպրոցները պահվում եյին նախ և առաջ ժողովրդի միջոցներով, զանազան առիթներով հավաքված նվիրատվություններով և հարկերով:

Բացի այդ դպրոցներից, հայերն ունեցել են զանազան այլ տիպի դպրոցներ՝ առանձնական, մասնավոր, տնային դպրոցներ, վորոնց քանակը, ինչպես ցույց են տալիս բազմաթիվ վկայությունները, մեծ ե յեղել:

Միջին դարերում հայերն ունեցել են զանազան վայրերում պետական, իրենց բովանդակությամբ աշխարհիկ դպրոցներ. այստեղ վորոշ չափով ընդունում եյին նաև աշխատավոր խավի յերեխաներին: Նույնիսկ կան մի քանի տեղեկություններ աղջիկների դպրոցական կրթության մասին:

## ԴՊՐՈՑՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԲՈՎԱՆԴԱԿՈՒՅՑՈՒՆԸ

Հին հայերի դպրոցական ձևի կրթութեան մասսայական բնույթը սկսվում է դեռ 4-րդ դարից: Մինչ այդ հայ արքաներն ու իշխանները, նախարարներն ու զինավորականները, մասամբ և ազատները, իրենց վորդիներին ուղարկում էին Հունաստան, Ատրեստան, Պարսկաստան, ինչպես և հետագայում Հռոմ՝ ուսում առնելու համար:

Տառերի գյուտից առաջ հայերը Հայաստանում սովորում էին հունական և ասորական լեզուներով: Պետք է յենթադրել՝ նաև հայերեն լեզվով:

Ագաթանգեղոսը վկայում է, վոր դեռ 4-րդ դարից սկսվում է դպրոցների հիմնադրումը՝

«Զի ի գաւառաց զաւառաց և կողմանց կողմանց ի տեղիս տեղիս ժողովեսցին բազմութիւն մանկտոյ, առ ի նիւթ վարդապետութեան, զգազանամիր զվայրենագոյն զճիւղալարարոյ զաշխարհարնական»:

(Ագաթ. Պատմ. Հայոց եջ 437. Տիխիս 1909 թ.)

Մինչ այդ, գլխավորապես բարձր խավերի յերեխաները իրենց կրթութեանը ստանում էին ատանձնական կամ տնային դաստիարակութեան միջոցով. նրանց դաստիարակները շատ դեպքում վոչ ազնվական, վոչ հոգևորական խավերից էին լինում:

Այդ դաստիարակները վոչ միայն լեզուներ և վորոշ գիտութեաններ էին ուսուցանում, այլև դեկավարում էին մանուկներին ֆիզիկական դաստիարակութեան գործը:

Նրանք վարժեցնում էին յերեխաներին նեւ ու աղեղի գործածութեան, նիդակահարութեան, մկուռնղի նետման, պարսատըկիսածութեան, սրտխաղութեան, ձիավարժութեան և այլ խաղերի:

Չորրորդ դարի դպրոցներում ընդգրկվում էին յերբեմն վոչ ազնվականների յերեխաները, հատկապես քրիստոնեութեան տարածելու նպատակով, ընդգրկում էին՝ «յաւժաւաւոր սեղիս դասս դասս», ինչպես ասում է Ագաթանգեղոսը: Այդ դպրոցները պահվում էին պետութեան և ժողովրդի միջոցներով: Ուսուցիչների ստացած աշխատավարձը կոչվում էր «յաւժաւաւան ունկիոց», բացի քարոզչական առարկաներից, նրանք սովորեցնում էին լեզուներ և «ղպուրեան տաւեսը», վորը նշանակում է գրագիտութեան:

Ուսուցիչներին՝ «Զոմանս յասորի դպրութիւն կարգեալ  
ևւ զոմանս ի հելլէն»։ (Ագաթանգ., հջ 438)։

Փալատոսը գրում է՝

«Կարգէր և ի տեղիս տեղիս՝ դպրոցս յունարէն և ասորե-  
րեբէն՝ յամենայն գաւառս հայոց»։

Տառերի գյուտից հետո հիմնադրվում են հայկական գրագի-  
տական դպրոցներ, կամ ինչպես ասում են՝ «հայատիպ դպրոց-  
ներ», այստեղից ել սկսվում է մասսայական ուսուցումը հայերեն  
լեզվով։

Մ. Սորենացին ասում է, թե ինչպիսի աշակերտներ էլին  
ընտրում այդ դպրոցների համար.

«Ընտրեալս՝ ուշեղս և քաջասունս (այսինքն պերճա-  
խոս), փափկաձայնս և երկարոգիս»։ (Սոր. Գ. ծգ)։

Աշակերտների այսպիսի ընտրություն կատարվում էր շատ  
դպրոցներում (Սորենացի Գ. ծգ)։

Ղաղար Փարպեցին դպրոցների մասին ուղղակի ասում է՝  
«դպրոցք հօտին ուսմանց», ուրիշ խոսքով սրանք այդ ժամանակի  
ժողովրդական դպրոցներն էլին։

Սակայն տերերի, իշխողների և հոգևորականության կողմից  
այդ դպրոցների գաղափարական և քաղաքական կողմը կանխո-  
րոշված էր։

Մենք ասացինք, վոր այդ դպրոցի խնդիրն էր՝ մի կողմից  
քրիստոնեության տարածումը, իսկ մյուս կողմից ժողովրդի մի-  
ջից իրենց համար հլու հնազանդ կազրերի ստեղծումը։

Բուրժուական և ընդհանրապես հին դպրոցի մասին խոսելիս  
հանձարեղ Լենինն ասում էր, վոր միշտ ել դպրոցը դասակար-  
գային է յեղեր։

«Բնական է, վոր հին դպրոցը ամբողջությամբ ծծված  
լինելով դատակարգային վագով, միայն բուրժուազիայի յեթե-  
խաներին եր գիտություն տալիս։ Նրա յուրաքանչյուր բառը  
հորինված էր բուրժուազիայի շահերը հաշվի առնելով»։

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի ուսումնական հիմնաը-  
կը, ինչպես վկայում են Ագաթանգեղոսը, Փալատոսը, Սորենա-  
ցին և Փարպեցին, կոչվում էր դպրոց, իսկ ավելի ուշ կոչվում  
էր վարժարան, դասատուն, դպրոցատուն և այլն։

Դպրոցատները մասին Կաղանկատվացին հիշում է, վոր  
դպրատետ «նստեալ ի դպրոցատանն... բակ ատեալ բաղ-  
մութեան յոյժ», նա սովորողներին զրվածքներ ու գրքեր էր  
տալիս, իսկ վճարանց ել պնակիտներ և հրամայում էր նրանց  
«մեծաձայն կարդալ»։

Այդ դպրոցներում անցնում էին դանազան հանրակրթական առարկաներ, ինչպես՝ գրաճանաչութուն, մայրենի և ոտար լեզուներ, յերգեցողութուն և թվաբանութուն: Գործադրվում էին ուսուցման վորոշ մեթոդներ, «տարյ զուսուճն» և «համարս տարյ», ախուհետև դպրապետը սկսում էր դասի հարցումը և ստուգումը, ինչպես վերը հանդիպեցինք՝ «մեծաձայն կարգալ» մեթոդին, այնպես էլ այստեղ՝

«Խնդրեալ դամարս» և «ցան աստ, ցան անդ հարցանէին, պահանջէին»: (Ոսկ. Մտթ. 168):

Միջնագարի սխոլաստիկ մեթոդից սա շատ առավել կողմեր ունի, թեկուզ և այն, վոր աշակերտներէց և վոչ մեկը չգիտեր, թե ով այսոր պետք է պատասխաներ դասը և վազը ումից և հարցնելու ուսուցիչը: Քանի վոր աշակերտը չգիտեր, թե յերբ և ուսուցիչը իրենից հարցնելու, բայց գիտեր, վոր ամեն բոպե կարող և հարցնել, ուստի նա դաս պատասխանելու համար միշտ պատրաստ պետք է լիներ: Դաս չպատասխանող աշակերտը շատ թանգ էր հատուցում, նա անպայման պետք է ծեծվեր՝ «գան ըմպէր»:

Այսպես, 4-րդ և 5-րդ դարերում առաջացած դպրոցական կրթութեան ծավալումը սկսում է դանդաղել կամաց-կամաց, ժողովրդի մեջ յեղած դպրոցը սկսում են քաշել դեպի վանքը: Մյուս կողմից հեթանոսական շրջանի հայերի սովորութեան մեջ յեղած մարդական խաղերն ու վարժութունները, հաճախակի ուսումնաբի ձևերն ու յեղանակները դատապարտվում են:

Հին հեթանոս հայերը մասսայաբար սովորում էին մարդանքներ, նրանք վարժվում էին զենք բանեցնելու մեջ, հաշվի առնելով մշտական պատերազմների արհավիրքը: Դրավոր խոսքի բացակայութեան հետևանքով հայերի կյանքը արտահայտվում էր բանավոր խոսքի, յերգերի, դյուցազնական զրույցների, բարոյական առաճների ու ասացվածների մեջ:

Վիպասանները բամբիւր ձեռներին յերգում էին, պատմում էին գեղեցիկ զրույցներ արիւթեան, հերոսութեան մասին, գովերգում էին դյուցազնների սերագործութունները և վողկորում յերկտասարդներին ու պատանեկութեանը:

Հանդիսական ուսումնաքն էր այդ ժամանակվա դպրոցը, վորը տեղի յեր ունենում հրապարակներում, ասպարեզներում, թատրոնական խաղերում՝ «Սաղերն է թատերին, ձիավարժքն է թատերին»: Քրիստոնեութեան պաշտոնյաները խլեցին ժողովրդից

այդ կրթութեան տարրերը, վորովհետև զրանք չեյին համապատասխանում նոր կրօնի սկզբունքներին:

Այնուհետև «հանդիսական ուսմունքի» գլխավոր վայրը դառնում է մենաստանը, վանքն ու յեկեղեցին: Վխապասանին փոխարինում է քարոզիչը, բամբուխն ու քնարին՝ յեկեղեցական ժամասացութեանը:

\* \* \*

Արժե մի ընդհանուր ակնարկ գցել հետագա դարերի հայոց կրթութեան սիստեմի և նրա բովանդակութեան վրա:

Այս շրջանում խոսք չեր կարող լինել կրթութեան մի ընդհանուր սիստեմի մասին: Այդ ժամանակաշրջանի պատմիչների վկայութեան համաձայն կարող ենք ասել, վոր յեղել են բազմաթիվ վանական դպրոցներ, դպրոցներ մենաստաներում, անհատական տնային, առանի, առանձնական դպրոցներ և առանձին «դպրատներ»:

Այս ժամանակաշրջանում մենք հանդիպում ենք հատ ու կենտ դպրոցների, վորոնք իրենց թե՛ ձևով և թե՛ ներքին բովանդակութեամբ զգալի չափով տարբերվում են վերը հիշված դպրոցներից: Դրանք իրենց բնույթով կարող են լինել հետագա ժողովրդական, ծխական դպրոցների նախատիպերը: Կրթութեանը վորոշ չափով սկսում է մուտք գործել և ժողովրդի մեջ՝

«Քանզի ամենայն անձն յորդորեալ փափաքէր յուսումն...»:

Ասողիկը հիշում է, վոր դպրոցներում անցնում էյին ճարտասանութեան՝

«Զդաս ճարտասանիցն բազմացուցաներ» (Ասողիկ 83):

Ապա անցնում էյին Դավիթ Անհաղթի «Մահմանք իմաստութեան», այնուհետև յերգն ու յերգեցողութեանը, վորը խիստ հարգված էր, և «մարզանք ամենայն տեսակի»:

12-րդ դարում Ն. Շնորհալին գրում է իր «Խրատ ուսումնականաց մանկանց»-ը, վորտեղ բազմաթիվ հետաքրքիր արվյալներ կան, վորոնք ապացուցում են մի կողմից «հօտին» համար յեղած դպրոցների գոյութեանը և մյուս կողմից այդ դպրոցների ներքին բովանդակութեան մասին:

Նույն Շնորհալին իր «Ընդ. թուղթք»-ի մեջ հիշում է Լևոն թագավորի միջամտութեանը և հրամանը դպրոցների նկատմամբ,

կա և վերջինիս կողմից դասատու նշանակելու դեպքը, վորը հիշում և կրակացի Հակոբ վարժապետը:

«Ուր մեր վարժարանք ի թագաւորական պատրաստեալ հրամանաց և կամ յոյս փառաց և պարգեաժ յառաջացելոցն յիմաստ»—գրում և Շնորհալին:

Սամվել Անեցին վկայում է՝ «Տուն կարգեաց վարդապետաց՝ վասն վարժելոյ զմանկունս», սա պարզ կերպով ցույց և տալիս, վոր դա վանական դպրոց չէ, այլ աշխարհիկ դպրոց և:

«Է այժմ դասատուն կարգեալ ի թագաւորէն հայոց Լեոնի և թագադրին և պայլին հայոց Աւշնի տեառն Կոռիկոսա»,—այդպես և ասում 12-րդ դարի քերական Հակոբ վարժապետը: Յեթե հիշվում են այսպես հատ ու կենտ դպրոցներ, վորոնք աշխարհիկ ընուցթ ունեն, դա չի նշանակում, վոր այդ դպրոցներում սովորում ելին աշխատավորութեան յերեխաները: Ընդհակառակը, աշխատավորութեան յերեխաներից շատ քչերին եր հաջողվում այդ ժամանակ սովորել դպրոցներում, վորովհետև առաջին հերթին պետք և ընդունելին իշխանների, ազատների և հոգևորականների յերեխաներին: Մյուս զժվարութեանը այն եր, վոր սովորողների ծնողները բավականին մեծ ծախսեր պետք և անեյին, վորը ամեն մի աշխատավորի ձեռնաու չեր:

Գլորեական ցանցի այս նեղ պայմաններում, 12-րդ դարում, Մ. Գոշի «Գատաստանագրքի» մեջ կա այսպիսի մի կանոն՝

«Յադագս դատաստանաց մանկանց ուսուցողաց»: Այս կանոնի մեջ ասվում է՝ «ոչ է պարտ վարձու զմանկունս ուսուցանել», այլ խոսքով՝ ուսուցումը ձրի պիտի լինի, իսկ վրմանց ել՝ «ըստ ինքեանց յօժարութեան ընծայ ուսուցողացն տացեն»:

Գոշի այս տեղեկութեանը հիշատակելով վրմանց կողմից: Նախ՝ մենք վերը ասացինք, վոր այդ ժամանակ Հայաստանում կրթական մի ընդհանուր սխառեմ գոյութեան չուներ, հետևաբար վոչ մի հիմք չկա Գոշի հիշատակած այդ կանոնը տարածելու յեղած բոլոր դպրոցների վրա: Յեթե վորոշ դրուցողների համար ընդունված կանոն եր «ոչ է պարտ վարձու զմանկանս ուսուցանել», ապա դա ամենեվին չի նշանակում, վոր այդ որեւէ սահմանված եր չքավորների յերեխաների համար, քանի վոր չքավորների յերեխաներից շատ քչերն ելին սովորում այդ ժամանակվա դպրոցներում: Գոշի հիշած կանոնի մյուս մասը, դա սովորողի կողմից հոժարակամ նվերն եր ուսուցչին, վո-

ըր վոչ ալ ինչ եր, յեթե վոչ ալ ժամանակ վա ուսուցչի աշխատավարձը և ըստ յերևույթին ավելի ձեռնաու յե յեղել «յօժարութեան ընծան»:

Գոչը հիշում ե, վոր ալ ժամանակ մի շարք դպրոցներ կային Գանձակի կողմերը, վորոնց իշխում էին «Հաթերք դղկի զորավոր տեսարքը»: Այսուհետև մի քանի աղբյուրներէց տեղեկանում ենք, վոր Ագուլիսումն ել «հաստատեցին դպրատուն», ինչպես և նրա շրջակա «Գեղորէիցն, անդր ժողովեսցին մանկունք առ ի յուսումն»:

Հայոց պատմութեան մեջ հայտնի յեն նաև առանձին, մասնավոր կամ տնային տիպի դպրոցներ, վորոնց մի մասը հոգևորականների, իսկ մյուս մասը աշխարհական մարդկանց ձեռքում և գտնվելիս յեղել: Մահակաղութա Սյունեցին (Գառնո Զորում) Մանուկներին ուսուցանում եր յերաժշտութիւն, սա «յոյժ հմուտ էր երաժշտական արհեստին», ինչպես վկայում ե պատմիչը:

Գրիգոր Մագիստրոսը գրում ե, վոր Պահլավունին և իր կին Շուշանը «ուսուցանեն դանկունս բազում»:

Այրաբատի Արկոռեցի Գրիգորը վկայում ե, վոր ինքը և իր յեղբայրը շատերի հետ միասին սովորել են Փիլիպպոսի և վերջինիս վորդիներէ մոտ:

Ներսես Շնորհալին վկայում ե, վոր իր ժամանակ հազվադէուտ են յեղել հասարակական դպրոցներ, իսկ տնային դպրոցներ ավելի շատ, նա հորդորում եր յերեխաներին ուսումը սիրել և «Իմաստնոց տնները» գնալ:

«Այլ յիմաստանոց տունըս գընալ

եւ յուսումանս ոչ ձանձրանալ»:

Այս դպրոցներում յեղել և ուսուցման վորոշ կարգ, ուսուցանելու յեղանակներ ու սովորութիւններ, վորոնց մասին հիշում են ժամանակակից մի շարք պատմիչները:

Այսպիսի դպրոցների մասին կա հիշատակութիւն և Վարդանի մոտ: Ստեփանոս Կրակեցին վկայում ե, վոր ինքը մի դպրոց ուներ Կիլիկիայում:

Մովսէս Յերզնկացու «Նրատք»-ի մեջ կա մի այսպիսի հիշատակութիւն. «Զտղայն յորժամ եօթն ամաց լինի, յուսումն տար»:

Անշուշտ շատ ուշագրավ և դպրոցականի այս տարիքը, սակայն մենք վերը արգեն ասինք, վոր այսպիսի բացառիկ բաները

չպետք է դարմանք պատճառեն: Այսպիսի դեպքերում պետք է հաշվի առնել հետևյալը, վոր յեթե դպրոցական մի ընդհանուր սիստեմ գոյութւոյն չունի, ապա հիշված կանոնները չեյին կարող պարտադիր լինել բոլոր դպրոցների համար:

Գուցե Յերզնկացին նկատի ունի մի նեղ շրջան, ուր ընդունված է յեղել 7-ը տարեկանից ուսման տալու սովորութւոյնը, գուցե նա խոսում է մի գյուղի, մի քաղաքի կամ մի քանի դպրոցների ընդունման կանոնի մասին, գուցե դա ցանկութւոյնն է, վոր անկախ կերտուելու հնարավորութւոյնից, որին անհնարացնել են ցանկացել նրանք, ովքեր այդ ժամանակի լավագոյն մտածողներ են յեղել: Այսպես անվերջ գուցեներ կլինեն, յեթե մենք այդ ձևով մտածենք: Հիմնականը այն է, վոր այդ ժամանակ ինչպես Հայաստանում, այնպես էլ Հայաստանի հարևան յերկրներում ընդունված էր ազնվականների և հոգևորականների յերեխաներին ավելի վաղ շրջանից ուսման տալու պրակտիկան: Անշուշտ այս ուսումը չպետք է հասկանալ անպայման մտավոր կրթութւոյնովը սկսվող մի բան, այլ և այն, վոր յերեխաները վարժվում էին Ֆիզիկապես և ձեռք էյին բերում զանազան ունակութւոյններ:

Ամենահավանականը այն է, վոր Յերզնկացու՝ «Չաղայն եօթն ամաց լինի, յուսումն տար» վերաբերվում է իր ժամանակի ազնվականութւոյնն ու հոգևորականութւոյնը:

Այս կարգի դպրոցների մասին կան մի քանի հիշատակութւոյններ, վորոնք ցույց են տալիս նրանց ներքին կանոնները, աշակերտների և ուսուցիչների փոխհարաբերութւոյնը, ուսուցիչներին վարձատրելու կարգը և վորոշ մեթոդների գործադրութւոյնը: Դասի ժամանակ աշակերտները սովորաբար ծնկած նստում էյին իրենց վրաների վրա, իսկ ձեռքերը դնում էյին ծընկներին, կամ կրծքին խաչաձև արած: Տառածանաչութւոյն, թվաբանութւոյն և այլ առարկաների դասատվութւոյն ժամանակ, յերբ պահանջվում է վորևէ բան դիտել, աշակերտները պետք է գլուխները բարձր պահեյին և տեսնեյին ուսուցչին, նրա ցույց տրվելիք այն առարկաները, վորոնք հանդիսանում էյին ուսումնական նյութ, չնայած այսպիսի մեթոդներն ու պարագաները անշունչափով էյին գործադրվում մեր հիշած դպրոցներում: Իսկ այն ժամանակ, յերբ ուսուցիչը «խրատ» էր կարգում, կամ «խոսք ասեր ունկնդրաց», աշակերտները պետք է գլուխները կախեյին, խոնարհեցնեյին վար և այդպես լսեյին:

Մխիթար Գոշի առակներից մեկը շատ ցայտուն կերպով ցույց է տալիս ուսուցանելու այդ սովորությունը: Առակն ասում է, վոր փիղը իր վորդուն ուղարկում և Պլատոնի մոտ ուսանելու, իսկ Պլատոնը նրան, փղի ձագին, առաջարկում է՝

«Գճիլ ի լսարանին և նա ոչ կարէր. սպա ասաց նմա զզլուին խոնարհեցուցանել երկիր և զայն ևս ոչ կարաց»:  
Այս փորձերից հետո Պլատոնը հորն է վերադարձնում ձագին՝

«Զի ոչ նստիլ կարէ և ոչ զզլուին խոնարհեցուցանել»:

(Մ. Գոշ—առակք.):

Այդ դպրոցներում աշակերտները գրում էին պնակիտի վրա (ներկած տախտակ), յեթև պնակետը սև եր, զբլում եր կավիճով, կրի կտորներով, իսկ սպիտակ տախտակի վրա գրում էին ածուխով: Իսկ հետագայում պնակիտը պատրաստում էին սև, հատուկ շերտավոր քարից, վորը կոչվում եր «քարէ տախտակ», և սրա վրա գրում էին մի տեսակ փխրուն քարե մատիտով: Այդ մասին բաղձաթիվ հիշատակութուն կա Յերզնկացու և Շնորհալու մոտ.

«Որպես մանկունք ուսման գրոյ ըզտախտակին համար տալոյ».

կամ

«Հայեանց, ասէ, մանուկ և տես».

Զի՞նչ ի տախտակըդ գրծագրես»:

(Շնորհալի—«Բանք չափաւ»):

Շատ դեպքում այդ տախտակի վրա կատարած աշխատանքով եր վորոշվում աշակերտի լավ ու վատ լինելը: Հովհ. Սարկավազը մի առիթով այս յերևույթը այլաբանորեն այսպես է հիշում.

«Ո՞ և զգժնդակապէս գծագրեալ ի տախտակս ոգոցն զվատթար և զամօթալից գիծսն լուսացէ մեզ, առ ի լուսագունի և գեղեցիկի ընդունելութեան գրոյ»:

Ահամ 12-րդ դարից մինչև 19-րդ դարի վերջերը հայ աշակերտների գրավոր աշխատանքի մասսայական միջոցներից մեկը պնակիտն է յեղեր: Պնակիտը անցք ուներ, աշակերտները թելով կախում էին իրենց պարանոցից, գրելու ժամանակ պնակիտի մի ծայրը սեղմում էին կրծքին, իսկ մյուս ծայրը հենում էին ձախ ձեռքին և աջով գրում:

Աշակերտի վրից կախված պնակիտը Շնորհալին համեմատում է վոսկեղեն վրնոցի հետ՝

«Գիւմըն՝ գանձէ քեզ բլուր բարի,  
Գրելով գիւմաստս ի տախտակի.  
Զնա արկ ի քոյգ պարանոցի  
Որ պատուական է քան զոսկի»:

(Շնորհալի—«Բանք չափաւ» 342):

Գրավոր աշխատանքներին վորոշ չափով վարժվելուց հետո, աշակերտները սկսում էին զրել մագաղաթի (կտորների) վրա, հետագայում վորոշ չափով և թղթի վրա: Գրում էին յեղեգնյա և փետուրե գրիչներով, իսկ թանաքը սև գույնի յեր, վորը կոչվում եր «տեղ» կամ սեւտեղ: Այս գույնը շատ գործածական ե յեղել. ներկել են իրեր, շորեղեն, աչքերի կոպերը և այլն: Այնուհետև գործածվում եր սեվակը, մուրը, միջնադարում կոչվում եր սև թանաք կամ մեխն: Ըստ Վրթանեսի, մի այլ թանաք կար, վորը պատրաստվում եր յերեք նյութից՝ «դեղ գրոց է արջասպ, գխտոր և կուիզ»:

Սովորաբար ուսուցիչներին վարձատրելու կարգը այսպես եր՝ ազնվականները իրենց տնային ուսուցիչներին պահում էին տանը, տալիս էին վորոշ միջոցներ նրա և իր ընտանիքի ապրուստի համար: Այս վարձատրությունը խիստ կամայական եր և վորեև ընդհանուր կանոնի բերված չեր. ով վորքան կուզեր, այնքան ել կվարձատրեր: Այս ուսուցիչները պալատում կամ ազնվականի տանը հանդիսանում էին յերեխաների բոլոր հարցերով զբաղվող մարդիկ. նրանք և՛ դասատու էին և՛ դաստիարակ և՛ ֆիզիկական վարժությունների ղեկավար և՛ ընդհանրապես խորհրդատուներ, մանկավարժներ և այլն:

Վանական դպրոցների դասատուները ապրում էին վանքի յեկամուտներով, կրոնական հարկերի, ծնողների տված թոշակների, նվիրատվությունների և հանգանակությունների միջոցներով: Զմոռանանք, վոր վանական դպրոցների ուսուցիչները բոլորը համարյա հոգևորականներ են յեղել, վորոնք ոգտվում էին վանքի միջոցներից իրենց կարգին համապատասխան: Բոլորովին այլ եր ժողովրդական, գյուղական, գավառական աշխարհիկ դպրոցների ուսուցիչների վիճակը: Այստեղ ուսուցիչը ոտձիկ չեր ստանում, «գարման ոտձկաց»-ը սրան չեր վերաբերում, նա ստանում եր փայ, սահմանված հերթականությամբ աշակերտների ձեռքով ծնողները տնից ուղարկում էին ճաշ, հաց, զանազան ուտելիք, նույնիսկ հագնելիք և այլն: Ուսուցիչը աշակերտի ձեռքով բերված

նյութական միջոցներից չափում եր ամեն մի տան բարենորոգ-  
թյունն ու խնամքը իր հանդեպ: Ուրիշ խոսքով ուսուցչի աչքը  
միշտ հառած եր աշակերտի ձեռքին: Այս ել բավական ե վորոշ  
յեզրակացության գալու համար այդ ժամանակվա ուսուցչի հեղի-  
նակության և տնտեսական վիճակի մասին:

Ազնվականների յերեսաների դաստիարակության գործում  
կար մի սովորություն, դա այն եր, վոր դեռ փոքրիկ հասակից,  
ուսման հետ դուզընթաց, նրանք վարժվում եյին գործնական  
հանձնարարություններ և պարտականություններ կատարելու  
մեջ: Որինակ՝ նախքան ինքնուրույն վորսորդ լինելը, նրանք  
«նախ շանց և թռչնոց սպասաւորել», այսինքն վորսկան բա-  
րակներին և բազներին խնամելը, ապա «յետ այնր կրթելոյ...  
յտանկայ սպասաւորութիւն»: Այս ամենից հետո պատանին դառ-  
նում ե կապարճակիր, վորսորդի կամ ձիավորի թիկնապահ, այ-  
նուհետեւ ինքնուրույն, ինչպես ասում ե Լամբրոնացին՝ «հաստ-  
կան կատարելոյ, ապա լինի ձիավոր»:

Բազրատունյաց շրջանում հայտնի յեն յեղել մի շարք դրոշ-  
րոցներ: Կան մի քանի տեղեկություններ, վոր առանձնապես Գա-  
գիկ Բազրատունին հետևում եր կրթության գործին, վորովհետեւ  
նա՝ «ի մանկութենէ դպրութեամբ դրոց վարժեալ էր և ի նո-  
սին դրօսնոյր և ի տերութեան ւաւուրս»: Այս ժամանակաշրջա-  
նում Հայաստանի մի շարք վայրերում հատկապես ծավալվում ե  
գրագիտությունը, առանձին դեպքերում հիշվում ե՝ «մինչև կա-  
նայքն ևս գրէին ևւ ընթեռնուին»:

Սակայն այս ամենի կողքին կան փաստեր, թե ինչպես  
հենց իրենք հոգևորականները արգելք եյին հանդիսանում գրա-  
գիտության ու կրթության ծավալման գործին: Դվինի ժողովը  
պահանջում եր, վոր հոգևորականները իրենց վորդիներին կըր-  
թության տան, այդ ժողովը ասում եր՝ «զմանկունս ուխտին ի  
դպրոց ոչ տացէ»:

Սյունյաց պատմիչ Որբելյանը և վոշ մի լավագույն հաս-  
կությունից չի զրկում իր տոհմին, շուայլ չափազանցություննե-  
րով դարդարում ե ամեն մի սյունեցու ձակատը: Ստեփանոսը  
վկայում ե, վոր Սյունյաց վարդապետական աթոռին եր վերա-  
պահվում թարգմանել և մեկնել «զգիրս»:  
«Պայծառացեալ դըպ-  
րոցքն որ ի նմա»,—համեմատում ե նա Սյունյաց դպրոցները  
Աթենքի դպրոցի հետ (Որբ. 18, 82, 97):

Նույն պատմիչը հիշում է, վոր Սյունյաց դպրոցներում սովորեցնում էյին քերթողութուն, ճարտասանութուն, փիլիսոփայութուն, գիրս յերաժշտության և այլն: Սակայն Սյունյաց ամենանշանավոր դպրոցը դա Տաթևի դպրոցն էր, վորը հիմնադրվեց 895 թ., ուր սովորում էյին բազմաթիվ աշակերտներ: «Ճոխ էր և վարժարանն վարդապետական կրթութեամբն»,—այստեղ սովորում էյին յերգեցողութուն, վորը լի էր «ծովամատոյց փիլսոփայիւք (յերգիչ) յերաժշտական երգոց»: Այստեղ ուսուցանում էյին և գեղազրութուն, պատրաստում էյին և «զբազիր յոյժ հովատ» մարդիկ, այսինքն գեղեցիկ ձեռագիր ունեցողներ: Ուսուցանվում էր այստեղ և նկարչութունն ու գրչութունը՝ պատրաստվում էյին «նաեւ արհեստավորք նկարչացն և գրողաց անհամեմատք»:

Տաթևումն են սովորել Հովհանն Վորոտնեցին, Գրիգոր Տաթևացին, Թովմաս Մեծոփեցին և ուրիշները. այսպես են վկայում Ստ. Որբելյանը, Ասողիկը և Նարեկացին:

10-րդ դարում հիշվում է Նարեկա վանքի (Ռշտունյաց) դպրոցը՝ «Բազմամարդ յերգեցողովք և գրական գիտողք»: Այդ նույն ժամանակ հայոց դպրութեան ասպարիզում յերևացին մի շարք նշանավոր գեմքեր՝ «մտավարժ փիլիսոփայ» Անանիա Շիրակացին, կամ ինչպես Մագիստրոսն է ասում՝ «գերագոյն փիլիսոփայ», այնուհետև միջնագարի գեղեցիկ խոսքի ներկայացուցիչներէց մեկը՝ Գրիգոր Նարեկացին, վոր ինքը իրեն վարժապետ էր կոչում:

12-րդ դարում Հաղարծինի մենաստանում Սաչատուր Տարոնացին «գըրեաց և ուսոյց բազմաց»—ինչպես հիշում է Գանձակեցին: Սա միաժամանակ սովորեցնում էր լատիներեն լեզուն, ապա ինքը տարածում էր արևելքի յերգերը, վորովհետև, ինչպես վկայում է նույն պատմիչը, Տարոնացին յեղել է՝ «Գիտութեամբ հոչակեալ, մանաւանդ երաժշտական արուեստի»:

Նույն դարում Մ. Գոշը Գեարիկում հիմնեց «ուսումնարան», ուր «բազում եղբարք ժողովեցան վասն հոչականուն տեղովոյն. և բազմաց եղև տեղի սըննդեան և ուսման, ուր և մեք իսկ սնեալ և ուսեալ եղաք ի նոյն վանս»—ասում է Գանձակեցին:

Այդտեղ սովորելու մեծ ձգտում է յեղել, ասում է նույն պատմիչը՝ «Բազումք գեգերէին առ նա ուսման աղագաւ»: Այդ վանքում հավաքում էյին զանազան գրքեր, գրականութուն, կատարում էյին թարգմանութուններ և այլն:

Կան տեղեկություններ, վոր ս. Մինաս անապատում կար զպրոց, ուր ուսուցիչ են յեղել իրենց ժամանակի նշանավոր քերականներ՝ Հովհան Յերզնկացին և հետո Մովսես Յերզնկացին: Այդ նույն գավառի Ալազ մենաստանում գնում էյին մարդիկ ուսման համար. հիշվում է, վոր այնտեղ կար հարավորություն՝ «Կանոնաւոր ուսմանց» (Ալիշան—Հայապատում):

Իր ժամանակին մեծ անուն է ունեցել Գալաձորում յեղած Նշեցու դպրոցը, ուր սովորում էյին 360 աշակերտ:

Բազմաթիւ վկայություններ կան Նշեցու մասին, վորպէս բազմակողմանի զարգացած մարդու, վորը՝ «սերճազարգեալ էր վարդապետական արժանաւորութեամբ»:

Այդ նույն դպրոցը (1309 թ.) այսպէս է հիշվում. «Մեծ դպրատուննս, որ կոչի Գալիձոր, ի վարժապետութեան մեծիս Նասյ-հայ (Նշեցու) և եռամեծին Դաւթայ»:

Լատինական պատմագիր Կ. Գալանոսը, Գալիձորի դպրապետին անվանում է իր ժամանակի «մեծահռչակ վարդապետ (ուսուցիչ) ի բոլոր հայս»: Մի այլ պատմիչ Գալիձորի մասին ուղղակի ասում է՝ «Համարձակիմ զսա կոչել կրկրորդ Աթենս և մայրաքաղաք ամենայն իմաստից»: Վոմանք Նշեցու և Դավթի դպրատունը «Համալսարան» են անվանում: Ներսէս Սասնեցին գրում է. Գալիձորում՝ «Եօթն ամ աշխատեցայ ի վարժումն հին և նոր տառից»: (Ալիշան—Հայապ. 546):

Համոզված լինելով վերոհիշյալ ավյալները վորոշ մասի շոտայ գովասանք լինելուն, այնուամենայնիւ մենք յեկել ենք այն յեզրակացութեան, վոր Գալիձորը և մեր հիշած մյուս վայրերը այդ ժամանակներում յեղել են աչքի ընկնող ուսումնատեղեր:

Պատմագիր Թովմա Մեծոփեցին հիշում է Հովհաննես Կախիկին վորպէս «յերանելի վարժապետի», վորը ուներ զպրոց Ապրակունյաց մենաստանում: Այդտեղ հավաքում էյին՝ «Բազում աշակերտս յամենայն զաւուռաց»: Նույն պատմիչը հիշում է Գր. Տաթևացուն, վորպէս անվանի վարժապետի, վորը ուներ 80 աշակերտ: Մեծոփեցին և Սյունյաց պատմիչ Որբելյանը հիշում են, վոր Տաթևացին ուսուցանում էր իր աշակերտներին՝ «զգիրս արտաքին իմաստասիրացն», ապա «զըշութեան արուեստ, զերիս գիրս մեկնեաց զասիւ», Պավղոսի թղթերը և այլ առարկաներ:

Թ. Մեծոփեցին՝ «Երեսուն և հինգ ամ դաս ասելով ամենայն անձանց գրոց աշակերտելոց» սովորեցնում եր՝ «Ժամանակագրութիւն ու գրագրութիւն», ուրիշ խոսքով պատմութիւն և գրագիտութիւն, ինչպես և «գեղեցիկ գրութիւն»: Հատկապես գեղեցիկ գրութեան հետ կապված կա հիշատակութիւն, վոր հնում աշակերտները «որինակելով հին գրքերը», սովորում եյին այդ գրքերի գրութեան ձևերը:

Արժե աս կապակցութեամբ հիշատակել մի ուշագրով յերևույթ. դա գեղեցիկ գրութեան արվեստն է, վորը խիստ ընտրոշ է յեղել միջնադարի հայ դպրոցներին և ուսումնական վայրերին:


Գրեթե առանց բացատրութեան, թե վանական և թե ժողովրդական ըրտը դպրոցներում ուսուցանվել է գեղեցիկ գրութեանը կամ, ինչպես շատ գեպքում հիշվում է՝ «գրուչութեան արւեստը»:

Շատ հասկանալի յե գեղեցիկ գրութեան ուսուցման պահանջը, գիր ունեցող ժողովրդին անհրաժեշտ եր գիրք—գրականութիւն, նույնը և դպրոցների համար: Գեղեցիկ գրութեան հատուկ շիջումներ եյին ստեղծվել. տարիներ շարունակ մարդիկ սովորում եյին գեղեցիկ գրելը, յուրացնել «գրուչութեան արւեստը»: Սրանցից վոմանք յեղել են, և՛ գրողներ և՛ նկարողներ, սրանց ավելի մատչելի յե յեղել տիրապետել գրչութեանը, վորովհետև նկարչութեանը խիստ նպաստում է ձեռագրի գեղեցիկութեանը: Այնուհետև լավագոյն ձեռագրերը տարածվել են և ուրիշները ընդորինակել են դրանցից, այսպիսով ձեռագրերի լավ շիջումները տիրապետող են յեղել:

Այս յերևույթի լուռ, սակայն պերճախոս վկաները հանդիսանում են մեր ունեցած տասնյակ հազարավոր ձեռագրերը՝ մագաղաթի և թղթի վրա:

Յերբմն տարբեր դարերի ձեռագրերը դժվար է իրարից տարբերել, նրանք այնքան նման են միմյանց իրենց գեղեցկութեամբ ու գրերի միանմանութեամբ, վոր կարծես մի մարդ գրած լինի:

Նույն Մեծոփեցին պատրաստեց «քսան և չորս ընտիր գրագիր», յեթի սրանց մի մասը առհասարակ գրագիրներ պետք է լինեյին պետական կամ յեկեղեցական հաստատութիւնների մեջ, ապա գրանց մի մասն ել, վորոնք ունեյին գեղեցիկ գրութեան՝ արտագրողներ եյին: Սրանք թարգմանական և ինքնուրույն գրքերը պիտի բազմացնեյին, ապա «զարդարէին գեղեցիկ պատկե-



րօք»։ յեղած ձեռագրերից շատերը ապացույց են այս բանի։

Այս նույն ժամանակաշրջանում դպրոց և յեղել Յեղիվարդ դյուղում։ դպրոցի հիմնադիրն էր Միմեոն Այբիվանեցին։ Մա կրոնական առարկաներին զուգընթաց ուսուցանում էր նաև «գնուբբ և զարտաքին փիլիսոփայութիւն՝ ամս տասն»։

Նույնիսկ 11-րդ դարում հիշվում է Կիլիկիայի «Մեաւ լեբան» մենաստանը, ուր հայտնի յեր Գրիգոր Վկայասերը։ Այստեղ էր Ն. Լամբրոնացին, վորը՝ «տեսողականին կրթությամբ յառաջէր»։ Այստեղ էր Մխրթար Գոշը, սա «առ վարդապետան որք էին ուսուցիչք անդ... բաղում ինչ օգտեալ ի նոցանէ»։ Վերջապես այստեղ սովորեց ազնաւոր քերական ու զեղազիր Գեվորդ Յերզնկացին։ «Մեաւ լեբան» առավելությունը, վորպես ուսուցման վայր, այն և յեղել, վոր այստեղ հավաքվել են համեմատաբար ավելի շատ ուսուցնական և բանիմաց մարդիկ։

Ն. Շնորհալին իր վոտանավորներէց մեկի մեջ այդ տեղի մասին այսպես է գրում.

«Զբանի սիրոյսն հաւաքեալ  
եւ առ ինքեան բնակեցուցեալ...»։

Կիլիկիայի Մեծ Ուլիտ անապատում և Մեծքարում կային դպրոցներ, այստեղ Հովհ. Յերզնկացին դասատու յեր և սովորեցնում էր՝ «զքերականն դաս իւրոց աշակերտաց» (Ալիշան—Հայտատում)։

Այստեղի հետ ել կապված է այդ ժամանակի ճանաչված յերաժշտագետ Հովսեփի և նկարիչ Մարգիս Պիծակի անունները։

11-րդ դարում նշանավոր էր Սանահինը, սա հանդիսանում էր Բագրատունեայց դաստակերտը և հանդատարանը։ Այստեղ կար դպրոց, վորին վոմանք ավելի ուշ ժամանակի տերմինով՝ ճեմարան են անվանում, իսկ վոմանք էլ համալսարան։

Ըստ Գրիգոր Մազիստրոսի, Սանահինը յեղել է վայրը՝ «ի միասին բնակելոց իմաստնոց բոլոր արհեստից և մակացութեանց պարառելոց»։ Մազիստրոսը վկայում է, վոր Սանահնում կար վարժարան և այնտեղ անցնում էյին մի շարք առարկաներ, ուր նույնիսկ մբցում էյին յերիտասարդները լավ սովորելու համար։

«Զերիտասարդացն որք ի վարժարանսն՝ հետորական և երաժշտական գնոցայն դատաւ ածեալ հանդէս և զմբցումն և զգեղեցիկ մոլութիւնս...»։ Նույն պատմիչը հաղորդում է, վոր այստեղ յերաժշտությունը—գլխավորապես սաղմոսերգությունն էր.

վորպիսին վանական դպրոցների հիմնական առարկաներից մեկն էր հանդիսանում:

Մենք հարմար ենք գտնում սահմանափակվել դպրոցների մասին տրված վերոհիշյալ տեղեկութուններով և յեզրափակել Անիում յեզած (12-րդ դարի) մի հետաքրքիր դպրոցով:

Այս դպրոցը ղեկավարում էին Հովհ. Սարկավազը, վորը իր ժամանակի բազմակողմանիորին զարգացած անձնավորութուններից մեկն էր: Սա բազմաթիվ գիտելիքներ առած գալիս է Անի և «շուրջ բակ բոլորեալ զմանկունս զիւրեաւ խոնարհաբար և ախորժելի սիրով ուսուցանէր զխրթին և զխորին իրս»:

Այս դպրոցում ավանդվում էին մի շարք լուրջ առարկաներ: Նրանք սովորեցնում էին՝ «Նախ զքերականութիւն՝ զբանալին՝ զիտութեան և զդաստիարակն վերձանութեան և զաղբերն տասնեակ առոգանութեանց, յորմէ և որով տրոհին միտք և ճանաչին ոյնք քաղացն և հեշտանան լսելիք ունկնդրանցն...»: Ինչպես տեսանք, այստեղ քերականութիւնը համարվում է վորպես գիտութեան բանալի, խոսքի, մտքի և տրամաբանութեան զարգացման միջոց: Քերականութիւնը նրանք գնահատում էին վորպես գեղեցիկ խոսքի, արտասանութեան դաստիարակիչ գիտութիւն, վորը հեշտացնում է լսելու և կարդալու ունակութիւնը և հանդիսանում է առոգանութեան աղբյուրը:

Անիի դպրոցը լուրջ ուշադրութիւն էր դարձնում և կետադրութեան, տրամաբանական նշաններին ու շեշտերին, մանավանդ կրճատ ընթերցման հմտութեանը, վոր այդ ժամանակներում ունէր խոշոր նշանակութիւն:

Գրագիտութեան ուսուցման զուգընթաց սովորողները պետք է տեղեկանան յերկայնագունիցն և սղիցն սիղորայից երկամանակացն և անձայնիցն, և տրամախոհ անկեցելոյ նշանին, ըստ վերաստութեան շեշտի և ըստ պարբեկութեան պարուկի, և յառոցելոյ ապագարձի...»:

Այս մեջբերումը պարզ կերպով ցույց է տալիս, վոր Անիի դպրոցում (12-րդ դարում) իրոք բազմակողմանի կերպով էր ուսուցանվում հայոց լեզուն. սա ապացուցում է, վոր այդ դպրոցում կար ուսուցման արգեն վորոշ փորձ: Այնուհետև ուսուցիչը՝ «կրթէր, արկանէր ի գիրս նուրբս և զժվարալուրս և ըստ առոգանութեանց խրատու ի վայր արկեալ պատրաստաբար խուզելով (կոկելով) զմիտս, և զբա և զբառս, առնելով համարս, ստուգիւ պահանջէր»:

Լեզվից հետո ուսուցման գլխավոր առարկան եր թվաբանութիւնը. բնական ե, վոր Անիի տնտեսութեան զարգացման այդ շրջանում, յերբ առևտուրը իր ընդարձակման նոր ուղիներ եր գտել, մաթեմատիկական գիտութիւնը չեր կարող անուշադրութեան մասնակից ըլլալ:

«Յետ այսորիկ ի խոյզ և քնին ընթացից լուսաւորացդ մտեայ, տայր գումարելի ի միատեսակ և յանստերիւր թիւս տոմարի, դուշ և զակն ոգւոց և տեղեակ առնել տօնից կարգավորաց և փոփոխմանց ամսոց և ամանակաց և եղանակաց քառաբաժին տարատմամբ»:

Այնուհետև հիշատակաւիբը ասում ե, վոր մի շարք գիտնականներ Նշանավոր յերկասիրութիւնները, վորոնք արդշունավետ եյին և պիտանի, վորոնք նպաստում եյին առաջարժմանը, մուտք եյին գործել այստեղ:

Անիի դպրոցում ուսուցանում եյին՝ «Բանս Արիստոտէլի և դթուականչափ խորոցս Փիլոնի»: Այս առարկաներից կատարվում եր խիստ ստուգում, վորպեսզի վոչ մի «անկարութիւն» չցուցարբերվի տրամաբանական գիտութիւնների ուսուցման գործում:

Սարկավագի մասին, վորպես ուսուցանողի, հիշատակվում ե, վոր նա բնական և հումանիտար գիտութիւնները մղում եր դեպի իր կրթարանը: Այդ հիշատակութեան մեջ շատ պատկերավոր կերպով ասվում ե, վոր Անիի դպրապետը սովորեցնում եր թե լավին և թե վատին և նրանց զլուխները հարստացնում եր գիտելիքներով և, վոր գլխավորն և, նա ձգտում եր պարզ ու բնական մեթոդներով յուրացնել տալ այդ ամենը: Նա՝

«Կրթէր զամանս իրաց, զքսակ մտաց մանկանց, մարզիչ և մաքրիչ և հալիչ, լաւին և վատթարին, պատրաստելով»:

Մենք հարմար ենք գտնում այս դպրոցի՝ մեզ հասած մի քանի կանոններով սկսել այն բաժինը, ուր շատ համառոտ կերպով ուղում ենք հիշատակել դաստիարակութիւնը, կարգը և պատիժները միջնադարյան հայ դպրոցներում:

# ԱԿՆԱՐԿ ԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ, ԽՐԱՏԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ Մ Ա Ս Ի Ն

Անիի դպրոցի մասին կա վկայութիւն, վոր այնտեղ դաստիարակութեան խնդիրներէց մեկը յեղիլ է սովորողների մեջ բարի նախանձի արմատավորումը և դրա հետեանքով, ասում է հիշատակագիրը՝

«Եռայր ոգւով ամ ոգի, ել և ելս միմեամբք առնելով»:

Նույն հիշատակագրի մեջ ասվում է, վոր աշակերտները անշտի հնադանդ էյին իրենց ուսուցչին, բավական եր ուսուցչի մի ակնարկը, վոր նրանք խոնարհաբար լսէին, գսպէյին իրենց և հնազանդվէյին:

Հիշատակագիրը այդ մասին ասում է.

«Եւ այնչափ հլրութիւն և հնազանդութիւն ուներ առ վիպն իւր, մինչ զի վասն դոյլն մի բանի առ նմա սաստելոյ և ասելոյ «լուս լիւ», զամս երիս լուսլ կայր ափ ի բերան, ընդ միտս և ընդ այ խաւսելով խոնարհաբար՝ ունկնդրութե պարապելով: Եւ զամս. 1. լիով ոչ լուծեալ զբերան, այլ գանձեալ կրթիւր և հնազանդէր զամհնութիւն անձին»:

Չափազանցութիւնները հեռու չեն հիշատակագրից, սակայն մեղ հետաքրքրողը և կարեւորն այն է, վոր այստեղ կարգապահութիւնը իր պատշաճ տեղն է ունեցել և արտահայտվել է հատուկ ձևերով ու յեղանակներով:

Թվում է թե այստեղ, հակառակ միջնադարյան դպրոցներին կարգապահութիւն հաստատելու հիմնական միջոցը հանդիսացող ծեծին, կամ ինչպէս Գր. Տաթեւացին կասեր՝ «Գաւազանի խրատ»-ին փոխարինում էր բանավոր խրատը: Այլ խոսքով ասած՝ այս դպրոցի դաստիարակչական ներգործող մեթոդը վոչ թե «Գաւազանի խրատն» է յեղել, այլ խոսքի ուժը: Մենք չենք հավատում, վոր այդ դպրոցին ծեծը խորթ լիներ, հատկապէս այդ ժամանակներում յերբ գործող պաշտոնական կանոնների մեջ որինականացված էր ծեծը, բայց չենք կասկածում, վոր ծեծի կողքին խրատն իր առանձին տեղն ու դերն է ունեցել այստեղ:

Հովհ. Սարգսիսագրը ընդունում էր, վոր դաստիարակելու հիմնական միջոցը խրատն է, իսկ չարագործների նկատմամբ՝ պարսավանքը: Նա ասում էր.

«Հրապարակաւ յանդիմանեցի, հրապարակաւ բըժշկեմ»<sup>\*</sup>

Իսանկադրային հասարակութեան մեջ դաստիարակութիւնը միշտ յեղել և տիրող դասակարգի ձեռքին խիստ, հատու զենքերից մեկը: Տիրող դասակարգը իր հատկութիւնները, իր ձգտումներին համապատասխան շահովեա կողմերը դաստիարակութեան միջոցով ներարկել և իր և այլ դասակարգերի սերնդի մեջ, իր նպատակին համապատասխան մարդիկ պատրաստելու համար:

Տիրող դասակարգերը շատ լավ են գիտակցել դաստիարակութեան ուժը: Ինու անտիկ աշխարհում մարդիկ զգացել են դաստիարակութեան նշանակութիւնը և արժեքավորել են այն իրենց պահանջին համապատասխան: Աղեքսանդր Մակեդոնացու հայրը Արիստոտելին ասում եր՝ «Յես արու դավակ ունենալու համար այնքան ուրախ չեմ, վորքան այն բանի համար եմ ուրախ, վոր իմ զավակին դուք պիտի դաստիարակեք»: Բնական և, վոր հայ իշխանավորների, նախարարների, ֆեոդալների և հոգեվորականների համար դպրոցը պետք և վոր իր պատշաճ տեղն ունենար, սա պետք և ստեղծեր տերերի սեփական պատկերի մարդիկ և մյուս կողմից՝ մարդիկ, վորոնք լինեյին հլու հնազանդներ:

Հատկապես դպրոցական հասակի պատանեկութեան և յերիտասարդութեան համար հայերը ունեցել են կանոններ, խրատներ և հրահանգներ: Նրանք փորձով գիտեյին, վոր այսպես թե այնպես մարդը արդյունք և վորոշ միջավայրի, վորոշ շրջապատի: Նրանք գիտեյին, վոր չարիքներ տեսնելն ու վատ խոսքեր լսելը խիստ դժուրին ճանապարհով մարդուն զեպի խոշոր չարագործութիւններ և տանում:

Մի հրահանգի մեջ խորհուրդ և տրվում ծնողներին և դաստիարակներին՝ «Այնպես պահել տղայն, որ մեղք չտեսնես և յիշոց չլսէ»: Հայերը իրենց ասացվածքների ու առակների մեջ բազմաթիվ մտքեր ունեն այն մասին, վոր մանկան պետք և դաստիարակել շատ վաղ շրջանից. «Ծառը կանաչ կձուռն», այլայնպես մեծ ծառ ձուռելը դժվար և: Պարզ և, վոր այդ ժամանակվա հայ կրթիչներն ու դաստիարակները սխալաստիկական կըրթութեան հետևորդներ ու վորոշակիորեն հայ ֆեոդալիզմի արտահայտիչներն էյին. հետեւաբար սրանք չեյին տեսնում և նախատեսում սոցիալական կյանքի փոփոխման հետեւանքով

<sup>\*</sup>) Սարկավագի դպր. մասին նյութերը վերցված են հիշատակարան «Հարանց վարք»-ից, վորը արտագրել և Մաթեվոս Յերեցը հայոց Պիեթիին Անգեղակոթում: Հին ձեռագիրը գրվել և ՇԼ ԹՎին Հաղբատում:

մարդկանց մասնայական փոփոխումը կամ դաստիարակութեան հասարակական բնույթը՝ վորպես միաժամանակ մարդկանց փոփոխման յերկվույթ:

Մի այլ հրահանգի մեջ Հովհանն ասում է՝

«Ձթողուն, որ դատարկ շրջի տղան և չար որինակներ տեսնէ, որովհետեւ անոր մտաց վրայ դշուբով կը տպաւորուի չարն, ինչպէս կնիքը կակուղ մոմի վրայ»:

Ալավկա վորդին իր «Կանոնաց» մեջ խրատում եր ծնողներին, թե ինչպես պետք է վարվեն յերեխաների հետ: Նա արգելում եր մայրերին իրենց տղաների հետ մի անկողնում պահել. «Ի տասնամենից ի վեր», այլ պետք է «Ի բաց քեցել և արաքոյ ինքեան կացուցանել»:

Նույն խորհուրդը տալիս եր յեղբայրների և քույրերի նկատմամբ, ասում եր «Կի մի սովորեացին ի չարն»:

Գրիգոր Տաթեւացին իր քարոզներէ մեջ մի շարք պարտականութեաններ և զնում ծնողների և ապա դաստիարակների վրայ, վորոնք են՝ սնուցանել յերեխային, դաստիարակել և հետո պահել անբարոյականութեանից, սովորեցնել մի արհեստ, վորպեսզի նա չդիմի գողութեան, այլ իր աշխատանքով ապահովե իր կյանքը: Այնուհետեւ Տաթեւացին խորհուրդ է տալիս՝

«Ձլեզու տղային պահել, զի մի շատ խոսեացի, և մի ի սուտ սովորեացի... պահել զձեռն ի գողութենէ... պահել զբոլոր մարմինն ի ծուլութենէ, զի մի քնու և ծուլ և շատակեր ուսցի»:

Մի ուրիշ հրահանգի մեջ ասվում է՝

«Ձտղայն դաստիարակն հրահանգէ, ի բաց կալ ի մնասակարաց, և յօգտակարսն կալ մնալ, և յանօգուտսն ոչ զբաղնուլ անժուժկալութեամբ»:

Միջնադարում հայերի մոտ սովորութիւն և յեղել յերեխայի մանկութեան մազերը մինչև 10-15 տարեկան հասակը պահել գլխին, հիշվում են պատանիներ՝ «Գես արձակ ողջ» կամ «Գես արձակ, ձգե ունն ի վար» և այլն:

Այս սովորութիւնը հիշատակում ենք նրա համար, վորպեսզի հիշեցնենք, վոր մազեր ունենալու սովորութեան հետ մեկտեղ կար և աշակերտին պատժելու դեպքում մազերը ոգտագործելու սովորութիւն՝ մազերից քաշել, պոկել, խուզել, վորպես այլաճակելու, ամաչեցնելու մի միջոց և այլն:

Այժմ տեսնենք, թե միջնադարյան հայոց դպրոցներում խրատական, դաստիարակչական յեղանակներին ինչպիսի պատիժներ են ուղեկցել: Նախ քան պատիժների մասին խոսելը, պետք է ասել, Վոր մեր պատմիչները, ինչպես և բազմաթիվ հիշատակագիրները ընդհանրապես քիչ են խոսել մեզ հետաքրքրող թեմայի՝ դպրոցների, կրթութւյան, դաստիարակութւյան, ուսման մեթոդների և նման հարցերի մասին:

Ինչպես ծնողների, նույնը և դաստիարակների կողմից ընդունված եր՝ վորոշ դեպքերում ահաբեկել յերեխաներին, վախեցնել դաժան անուններով, դատի յենթարկելով և այլն: Յեղև և, որինակ, պատժի և դաստիարակութւյան այսպիսի մեթոդ. ծնողը յերեխային սպառնացել և յենթարկել խիստ պատժի, այդ ժամանակ միջամտել և ուսուցիչը և յերգվել և իր կարողութւյամբ ու պատվով, վոր կդաստիարակի յերեխային:

Սա իր ժամանակի դաստիարակման հետաքրքիր յեղանակներից մեկն էր, վորի մեջ յերեվում և ուսուցչի պատասխանատուութւյան մոռնալը:

Մենք վերը տեսանք, վոր հայերի դաստիարակութւյան մեջ արդէն կար նախազգուշական կամ, ինչպես ասում ենք՝ պրոֆիլակտիկ միջոցառումներ: Իս գլխավորապես խրատական, քարոզչական ճանապարհն էր, վորից հետո հանցադործները անխուսափելիորեն պատժվում էին: Ինչպես հույների, նույնպես և հայերի մոտ ընդունված էր պատժի մեջ յերկու սկզբունք, վոր ամեն մի պատիժ առաջին հերթին պետք է հետապնդի յերեխայի ուղղմանը և յերկրորդ՝ հանցանքի չափով պետք է վորոշվի պատժի չափը:

Հաճախ դպրոցի դպրատան պատից կախված էին լինում ծեծի դեպքում գործածվող իրերը՝ մարակը, ճիպոտը և այլն: Արանք նախ և առաջ զգուշացնող պարագաներն էին, շատ դեպքում ուսուցիչը «ճանապարհից գուրս յեկող» աշակերտին խորհրդավոր կերպով ցույց էր տալիս այդ իրերը. բնական և, վոր աշակերտը սարսուռ պիտի զգար և հակառակ իր հասակէ առանձնահատկութւյուններին, սանձահարկը իրեն:

Այդ բանը հիշվում և Անիի դպրոցում՝

«Այլ սանձեալ կրթէր և հնազանդէր զամենութիւնն անձին»:

Իստեք հարցնելու ժամանակ վայ նրանց, վոր «չտային»

համար», դրանց բաժինն եր' «զան ըմպել» (ծեծ ուտելը):

Յերբեմն ուսուցիչը անկարգ յերեխայի ծնողին խորհուրդ եր տալիս դաստիարակութեան գործը ուսուցչին թողնել, վորովհետեւ վերջինս դիտել, թե ինչպես պետք է վարվի յերեխայի հետ: Նա ասում եր. «Յիս թող, յայսմ հետե ես եմ երաշխաւոր», կամ պատասխանատու:

Սակայն հետաքրքրականն այն է, վոր այդ ժամանակվա դաստիարակ-ուսուցիչը ծնողի ձեռքից դաստիարակութունը խլում եր վոչ թե նրա համար, վոր վերջինս ծեծում եր յերեխային, այլ նրա համար, վոր այդ ծեծը լինի կազմակերպված ու նպատակային, վոր յերեխան փոքր հասակից վարժվի, թե ինչը կարելի յե անել և ինչը չի կարելի:

Այդ ժամանակի դաստիարակները գտնում էին, վոր ծեծը չարիք չէ, այլ նա առերեկույթ է մի անախորժ բան, վորը սակայն մարդուն կհասցնի մինչև վառքի աստիճանը: Այսինքն ծեծը մարդուն հլու հնազանդ կդարձնի, իսկ տերերը կզնահատեն մարդու նման արժանիքները, վորովհետեւ նրանց պետք եր հնազանդ ծառայութուն:

Յերբեմն սովորողները ծեծվում էին վոչ թե անկարգութեան, այլ դասերը չսովորելու համար: Այս յերեկույթը հենց բղխում եր նրանց դաստիարակութեան սկզբունքից, վորովհետեւ չենթարկվողը, հանձնարարութուն չկատարողը պետք է ծեծվեր, պատժվեր, ինչպես կյանքի մեջ, այնպես ել դպրոցում:

Ներսես Շնորհալին իր խրատական վոտանավորներից մեկի մեջ հենց այդ մասին ել խոսում է՝

«Քեզ համարել տայ բարեկամ

Որք վասն ուսման հարուն քեզ զան.

Քանզի ապտակ և զաւաղան

Յետոյ բազում փառքս քեզ տան»:

(Շնորհալի—Բանք չափաւ 549):

Շնորհալին «բազում փառք» խոստանում եր նրան, ով իսկապես կյուրացներ այն ամենը, ինչ պահանջվում եր այդ ժամանակվա մարդուց խոնարհ ծառայութեան համար:

Այսուհետեւ միջնադարյան հայ դպրոցների պատժի ունիվերսալ միջոց հանդիսացող ծեծը արտահայտվում եր տարբեր յեղանակներով: Մենք ասինք, վոր Գր. Տաթևիպցին խրատներից ամենատիպիվը, ամենաներգործողը համարում եր «զաւաղանի խրատը»: Սարկավազը հիշում է, վոր ծնողների կողմից

ձեծը վոչ միայն չեր դատապարտվում, այլ խրախուսվում եր թե դպրոցում և թե տանը՝ «Բազում անգամ դան ըմպելով մանկանն ի մօրենն»: Մարկավազը նկարագրում է ձեծի հետեվանքները, վորը այն աստիճանի յեր հասնում, վոր ձեծվողը «կոչեցեալ ի նմանէ՛ ի գիրկն անկանի» (Մարգ. 299):

Միջնադարյան դպրոցներում ձեծը չեր սահմանափակվում ուսուցչի ձեծով, յերբեմն ուսուցչի հրամանով աշակերտն ևր ձեծում իր ընկերոջը—աշակերտին. սրա հետեվանքների մասին ավելորդ է խոսել:

Մի շարք հիշատակությունների ու վկայությունների հիման վրա կարող ենք ասել, վոր Ֆիզիկական պատիժները դպրոցում արտահայտվում էյին հետեվյալ յեղանակներով, ձեծն ընդհանրապես, գավազանով ձեծը, մտրակի գործագրումը, ծնկաչոք անելը, ծանր իրեր ձեռքի վրա պահելը, ճիպոտով ձեռքերի ափի մեջ և մատներին խփելը, ականջներից ու մազերից քաշելը, ճաշազուրկ անելը, ընկերների հետ խաղաղըրկումը և այլն:

Այս ամենը հատուկ են յեղել միջնադարյան դպրոցներին առհասարակ և վոչ միայն հայ դպրոցներին:

Մա չի ասում այն, վոր Ֆիզիկական պատիժ առկայությունը նշանակում եր բարոյական խրատների ու քարոզների վտարումը դպրոցից. ամենեվին: Միջնադարի հայ դպրոցներում քարոզն ու խրատը կանոններն ու որևնքները իրենց ուղած մարդու ձեզակերպման հիմնական միջոցներն էյին հանդիսանում, մանավանդ վոր ամեն դեպքում խոսքը ոգտագործվում եր սխորաստիկ ճանապարհով, պատրաստի դոգմաները մարդկանց մեջ ամրացնելու նպատակով: Նույնիսկ հիշվում են առանձին դաստիարակներ, վորոնք Ֆիզիկական պատիժ չեն գործագրել: Մակայն այդ զբաղրոցների ձեծն ու խրատները չէյին հակասում միմյանց մարդկանց հլու հնազանդ դաստիարակելու գործում, ընդհակառակը, զրանք համապատասխանում էյին վերոհիշյալ պրոֆիլի մարդկանց ստեղծելու պահանջներին:

## ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԸ ՅԵՎ ՌԻՍՈՒՑԱՆՈՂՆԵՐԸ

Ինչպես վերն ասինք, դեռ վաղ ժամանակում ուսումնական հիմնարկները կոչվում էյին դպրոց, դպրանոց կամ դպրատուն: Դպրոց անունը գործածել են՝ Ագաթանգեղոսը, Փավստոսը, Դ.

Փարպեցին, Խորենացին և ուրիշները: 9—10-րդ դարերում յերբեմն դպրոցի փոխարեն ուսումնական վայրը կոչվում էր՝ «աշակերտարան», «վարդապետարան», վորոշ տեղերում՝ «Բարունարան»:

Հետագայում մի շարք պատմիչների մոտ, ինչպես և հիշատակագրերի մեջ, հանդիպում ենք ուսումնաստեղերի այսպիսի անունների՝ «վարժարան», «դպրատուն», դասատուն», «դպրոցատուն», ուսումնարան», ավելի ուշ՝ «վարժատուն» և այլն: Վերոհիշյալ տերմինները գործածվում են՝ Նշեցու, Ան. Նարեկացու, Ն. Շնորհաբու, Ստ. Որբելյանի, Ա. Դավրիժեցու, Թ. Մեծոփեցու և ուրիշների կողմից:

Ինական է, վոր ուսումնական հիմնարկների անուններին պետք է համապատասխաներ նաև նրա պաշտոնյաների և սովորողների կոչումները: Այսպես որինակ. ուսումնարան—ուսուցիչ, ուսուցող, ուսուցանող, «տալոյ զուսուճն», կամ դպրատուն—դպրապետ, ախուհեան՝ վարժարան—վարժապետ, դասատուն—դասատու, դասասաց, վոր նշանակում է դաս ասող և այլն:

Ուսումնական վայրերում աշակերտները, սովորաբար, դասի ժամանակ նստում էյին ծալապատիկ կամ ծնկների վրա, ուսուցիչները նստում էյին յերբեմն ծալապատիկ, կամ վորևե բարձր տեղ, աթոռի վրա, իսկ վորոշ դպրոցներում ուսուցչի համար գոյուլթյուն ուներ ամբինս: Այսպես որինակ, Ստ. Որբելյանը ասում է, վոր Մաթուսաղան նստում էր՝ «ի վերայ բարձր ամբինս րարունարանին» կամ «նստալ յամբինս րարունական»:

Յերգնկացին իր ժամանակակիցներից մեկի մասին ասում է, թե նստած՝ «ի վարդապետական աթոռ՝ ասիլ դաս»: Նույնը ասում է Թ. Մեծոփեցին Տաթևացու մասին:

Հիշվում է նաև «յաթոու ուսուցման», վորը նշանակում է ուսուցանողի աթոռ:

Կիրակոս Գանձակեցու կողմից հիշատակվում են Կոնստանտին առաջինի կանոնները, ուր կան դպրոցի ղեկավարման հետաքրքիր պահանջներ: Այստեղ ևս գործածվում են դպրոցական և կրթական այն տերմինները, վորոնց մասին մենք վերը հիշեցինք:

## ԻՆՉ ԵՅԻՆ ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ

Մենք վերը հիշեցինք, թե ինչ էյին ուսուցանում մի շարք դպրոցներում, ուստի անհրաժեշտ ենք համարում այստեղ հաժա-

առտակի կերպով թվարկել այդ ավանդվող առարկաները:

Նախ՝ գոյությունն չունենալով կրթական մի ընդհանուր սխառեմ, չեք կարող ավանդվող առարկաների մի ընդհանուր ախեմա լինել, բացառութեամբ կրոնական առարկաներից: Իսկ մնացած առարկաները ամբողջապես վորոշվում եյին դասավանդական կազմով. նայած տվյալ դպրոցը ունի ձևերն երևալու և դասատուները ինչ գիտելիքներ կարող եյին ավանդել, հենց դրանով ել վորոշվում եր այդ դպրոցի ուսման բովանդակութեանը:

Այդ շրջանի դպրոցների զգալի մասն ունեւր մեկ ուսուցիչ, ուստի այդ ուսուցանողը շատ դեպքում դասավանդում եր մեկից ավելի առարկաներ: Անշուշտ այս յերևույթը ավելի ցածր աստիճանի վրա կանդնած դպրոցի նշան ե:

Այժմ կարող եմք թվել այդ դպրոցներում ավանդվող առարկաները: Բնական ե, վոր այդ առարկաները ամբողջութեամբ չեյին դասավանդվում ամեն մի դպրոցում, մի դպրոցում ավելի քիչ եր առարկաների քանակը, իսկ մյուս դպրոցում ավելի շատ:

9—13-րդ դարի դպրոցներում ավանդվում եր՝ մայրենի լեզու, քերականութեան, հունական և լատինական լեզուներ, ճարտասանութեան կամ հեռտրութեան, փիլիսոփայութեան կամ իմաստասիրութեան, քերթողութեան կամ բանաստեղծութեան, յերաժշտութեան կամ յերգեցողութեան, նկարչութեան կամ մանրանկարչութեան:

Այնուհետև — ուսուցանում եյին մի շարք դպրոցներում «գրչի արուեստը», գրչութեանը, գեղեցիկ գրութեանը, վորը վոչ այլ ինչ եր, քան գեղագրութեան: Գեղեցիկ գրութեան մի մասը հասել ե մեզ, դա այն հաղարավոր սքանչելի ձեռագրերն են, վորոնք գտնվում են մեր մասնադարանում: Յեթե այդ ձեռագրերն իրենց բովանդակութեամբ շատ բան են ասում մեր ժողովրդի անցյալից, ապա նրանք քիչ բան չեն ասում այդ նույն ժողովրդի գրութեան և նկարչութեան արվեստի մասին:

Վորոշ դպրոցներում ուսուցանում եյին բնական գիտելիքներ, աստղագիտութեան, թվաբանութեան, տոմարագրութեան և այլն: Իսկ կրոնական առարկաները, առանց բացառութեան, բոլոր դպրոցներում դասավանդվում եյին:

Հետաքրքրականն այն ե, վոր միջին դարերի հայ դպրոցներում ուսուցանում եյին առանձին գիտնականների տեսութեանները, հենց գիտնականի, գիտութեան կաճառների անունով:

Այսպես, որինակ, մեր հիշատակած Անիի դպրոցում Սարկավագը ուսուցանում եր՝ «գառակախաւս բանս Արիստոտէլի և զթուականաչափ խըտրոցս Փիլոնի» և այլն:

Ուսուցանում էլ ին «Պաւղոսի թղթերը», «Պղատոնի մաքերը», «Դավիթ Անհաղթի փիլիսոփայությունը», Ան. Շիրակացու «Աստղաբաշխությունը», «Աստղագիտությունը», «Տիեզերագիտությունը», ինչպիս նաև հունական գրականությունը և այլն:

## ՌՒՍՈՒՑՄԱՆ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Յեթե հնարավոր ե մի շարք պատմիչներից, հիշատակագրերից, մեզ հետաքրքրող հարցերին վերաբերող առանձին ուսումնասիրություններից վորոշ ակնարկներ և նկարագրություններ գտնել այս կամ այն դպրոցի մասին, ապա չափազանց դժվար ե այդ արդյունքների մեջ գտնել դպրոցի ներքին կյանքին վերաբերող փաստեր, մանավանդ ուսուցման ձևերի, յեղանակների և մեթոդների մասին:

Յերբեմն հանդիպում են այսպիսի արտահայտություններ, վոր գիր կամ գրել կարգալ սովորելու համար մարդիկ տարիներ շարունակ չարչարվել են: Սա ցույց ե տալիս, վոր գրածանաչության մեթոդիկան այդ ժամանակ իր խանձարուրից դեռ գուրս չեր յեկել և գրագիտության ուսուցումը ավելի վատթար ե յեղել քան 17—18-րդ դարերում:

Միջնադարի ուսուցիչը խիստ կերպով պահանջում եր, վոր ամեն մի աշակերտ տրված դասը լավ դիտենա, կարողանա կարդալ և պատմել իր նման, իր ասածից վոչինչ ավել կամ պակաս, դրա համար ել աշակերտների մեծ մասը սերտած, բերան արած մտնում եր դասարան: Միտլաստիկ ուսուցման այս յեղանակը զրկում եր սովորողներին ինքնուրույնությունից, տրամաբանական ուժին փոխարինում եր ձևական, մեխանիկական վարժեցումը: Այլ խոսքով ասած, այս կարգի ուսուցումը վոչ թե զարգացնում եր մարդուն, այլ վարժեցնում, վոչ թե փաստեր եր տրվում մշակելու, վերամշակելու, այլ փաստերը մեխանիկորեն կրկնելու, տրամաբանության փոխարեն՝ սերտածի շարագրություն, մի խոսքով վոչ թե գիտություն, այլ վարժություն:

Այնուհետև ուսուցիչը շատ հաճախ իր կարգացածը խմբովին կրկնել եր տալիս աշակերտությանը, իսկ հաճախ աշակերտները կարդում էյին հաջորդաբար, մեկը մյուսին շարունակելով կամ

«գրած ցուցակով»: Գրավոր աշխատանքի հիմնական ձևը դա արտագրութունն էր: Ընդունված էր դասարանում դասի սերտելու սովորութունը՝ «լուռ կարդայու» և «մեծածայն կարդալու» յեղանակով: Այնուհետև պատահում ենք դասեր սովորելու այսպիսի ձևի՝ ուժեղ աշակերտի գլխավորությամբ դասերը կրկնել, ապա բացատրել, մեկը մյուսին լրացնել, վիճել, Սահայն ընկերական շրջանի այս վեճը ուսուցչի մոտ չէ տեղափոխվում, վորովհետև ուսուցչի հետ վիճելը համարվել է պարկեշտության սահմանից դուրս մի բան և նույնիսկ «մեղք», քանի վոր «աշակերտը չէ իմաստուն քան զվարդապետ իւր»:

Ուսուցչի կողմից աշակերտի քննութիւնը—դա վերջինիս համար փորձության մի ծանր շրջան էր: Գննության հատուկ յեղանակներն ու ձևերը, ստեղծված արտակարգ խորհրդավորութիւնը, դասարանական սովորական խստությանն ավելանում էր ինչվոր անսովոր, չար կերպով արտահայտվող լրջութիւն, սրանք չեյին կարող չարագուշակ բաներ չասել ու չշփոթել քննվող աշակերտին:

## ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԴԱՍՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ԵՊՈՍՈՒՍ

Ինչպես վերը տեսանք, «Մասունցի Դավիթ» եպոսի ծագման և ձևավորման շրջանում (9—14 դարերում) հայերը ունեյին դպրոցներ և դպրոցական վորոշ սիստեմ, նույնիսկ դասագրքեր, վոր միայն կրօնական, այլև արտաքին գիտութիւններից: Այս ամենն առկայության պայմաններում, ինչպես մենք ցույց տվեցինք, դոյութիւն ունեւ ուսուցման վորոշ ուղղութիւն, ուսուցման ձևեր ու յեղանակներ:

Եպոսի ծագման շրջանի հայերի գրագիտության և ֆիզիկական վարժութիւնների մասին բազմաթիւ նմուշներ կան և նպոսի մեջ: Յեղնելով եպոսում յեղած հիշատակութիւններից, մենք տեսնում ենք, վոր գրագիտութիւնը տարածված է յեղել ժողովրդի մեջ, իհարկե, առավել չափով բարձր խավերի մեջ:

Եպոսի հերոսներից գրագետ են մի շարք մարդիկ՝ Մհերը, Դավիթը, Գոհարը, Սանասարը, Բաղդասարը և ուրիշները:

Եպոսում հիշատակվում ե՛

«Գոհար խաթունն գիրք իդի հեռջիվ,

Կարդաց, տեսավ՝ խրոդրերն ի»:

Կամ աղջկա նամակը գրված Բաղդասարին.

«Բաղդասար տղա,

Իմ սըբտ քանց եսա դարտակ կուժ սերսուտի ի.

Իմ զլոխ քանց եսա լիք կուժ լիքն ի»:

Մի ուրիշ տեղ հիշվում ե վոր Սանասարը՝ «Թուղթ առավ ձեռ,  
Թուղթը կարդաց»:

Նույնպես և Բաղդասարը՝ «Թուղթը վերցուց, կարդաց,  
գրեց, ջուզար երեց»:

Գրադետ ե և ձենով Ռհանը, նա թուղթ ե գրում Մհերին՝

«Մհեր, Կուղբադնը ազգական տղեք ելած ին, կտրճացած  
եկած Սասմա քաղքի դավին կենին.

Իս չըմ կեռնա, իմ խրվաթը չհաղթը.

Կերնիս, կի կաս, խամնիս»:

Խանդութ Խաթունը նույնպես գիր ե գրում՝

«Խանդութ գիրքմ գրեց, ոսյաթ երից»:

Սյունահատե (Աձմու շահը) թուղթ ե գրում, վորով առաջարկում  
ե Խանդութին կամովին գնալ իր մոտ, այլապես ուժով կտանի.

Խանդութը այս թղթին պատասխանում ե՝

«Իս չըմ իդա, շատ կըտրիճ եք,

Իկեք, ընձի դոտով տարեք»:

Գրադետ ե և Մհերը, սա կարդում ե ու գրում, վո բովհատե

«Մհերն որ եկավ—եղավ յոթ տարեկան,

Յոթ շենք եղավ իր բոյ:

Ենոր վանք-վարժատուն գրին,

Գիչ մի սորվավ, շնորքով լցվավ...»

Մի ուրիշ տեղ՝

«Թուղթ կը կարդա Մհեր, կը խասկընա.

Կերթա, ուր կնկան կըսը»:

Եպոսի բազմաթիվ վարիանտներում հիշատակվում ե Դավթի  
գրադետ լինելու մասին: Խանդութ Խաթունը նամակ ե գրում  
Դավթին՝

«Թե տու ինձի հախտեցիր, ինչ կուզես, տը տամ»:

Եպոսում հիշվում ե՝

«Վոր թուխթ առավ Դավիթ, կարդաց, իմացավ՝ Խան-  
դութ Խանըմն ի կիրե»:

Մի ուրիշ վարիանտում ասվում ե՝

«Ու Դավիթ դնաց տերտրոջ տուն.

Սաղմոց առավ ձեռ, սաղմոց ըսեց»:

Այսքանն ել բավական ե համոզվելու համար, վոր Եպոսի-  
ծադման և ձեւավորման շրջանում հայերի մտտ գոյություն  
ունեցող զբազիտությունը արտահայտվել ե վեպի համարյա բո-  
լոր վարկանտներում, և զբազիտությունը, վորպես կուլտուրայի  
վորոշ աստիճան, եպոսի մեջ հիշատակվում ե պատշաճ հարգան-  
քով:

Հիմնականն այն ե, վոր ժողովուրդը ցանկացել ե ստեղծել  
իր սեփական պատկերի մարդ, վոր Դավիթը իրենից ժողովրդի  
ամբողջությունը ներկայացնի, լինի ժողովրդի ձգտումների,  
ցանկությունների արտահայտիչն ու կենսագործողը. և այդ հա-  
ջողվել ե նրան:

Ժողովուրդը յերազում եր մի վիթխարի ուժ, վորն իր ձեռ-  
քով բռնակախների արդար դատաստանն աներ և հաստատեր  
ժողովրդների խաղաղությունը:

Մենք վերը ասինք, վոր հայ ժողովուրդն իր ստեղծած  
կպոսի մեջ վոչ միայն արտահայտել ե այն սովորություններն  
ու դաստիարակչական գծերը, վոր յեղել և իր կենցաղի մեջ, այլ  
և այն ամենը, ինչ ինքը տիրողների լծի տակ կենսագործել չեր  
կարող, բայց նա յերազում եր, տեսչում և պայքարում եր հասնել  
նրան:

Ժողովրդի ստեղծած Դավթի մեջ խտացած են մարդկային  
գեղեցիկ հատկությունները, նա սիրում ե աշխատավորներին,  
հովիվների, հոտաղների ու չքավոր գյուղացիների «քաղցր աղ-  
բերն» և, նա փայփայում և յերկրագործներին, հողի մշակներին  
— «հունձ ու փունջ» անողներին:

Դավիթը սիրում ե իր հայրենիքը, իր ժողովուրդը, նա սի-  
րում ե և ուրիշ ժողովրդներին, աշխատավոր մարդկությանը:

Իր ժողովրդի ցավով տառապած Դավթի ձեռքից և վոչ  
մի ուժ չեր կարող խլել կայծակի թուրը, յերբ նա ջարդ ու  
փշուր եր անում Մսրա բանակը. բայց հրաշքը կատարվում ե:

Մսրա բանակից մոտենում ե Դավթին մի խելք ծերունի.

— Ինչո՞ւ յես կոտորում խեղճ ժողովրդին, ի՞նչ են արել  
սրանք քեզ, կոխվը թագավորն և անում և վոչ թե ժողովուրդը, —  
ասում և ծերուկը: Դավթի բազուկը թուլանում և և նրա սուրը

ողում կախված և մնում, վորովհետև Դավիթը Մարա ծերունու բերանից լսում և այն, ինչ վոր իր ժողովուրդն և ատում:

Դավիթը ատում եր բռնակալներին, տերերին ու իշխաններին, պատերազմ նյութող յերկրակալներին, խաղաղությունը խափանող ժողովրդի թշնամիներին:

Ժողովուրդն իր ստեղծած մարդուն ավել եր իրեն նատուկ վեհանձնություն, մեծահոգություն, մարդասիրություն, պարգություն և քաջություն: Դավիթը չեր սիրում նենգություն և խարեյություն, նա իր ժողովրդի նման եր մտածում և խարեյությամբ բերդ զրավողին հերոս չեր անվանում:

Այդ եր պատճառը, վոր Մարա բանակի վրա հարձակվելուց առաջ, նա արթնացրեց ամենքին, զգուշացրեց, վոր պատրաստվեն, վորովհետև ինքը չի ուզում «նամարդ» կովի բռնվել:

Դարերի ընթացքում ստեղծված, ժողովրդի տրամագրություններն ու ցանկությունները իր մեջ ամփոփած «Սասունցի Դավիթ» եպոսը ինքը իրենից միաժամանակ ներկայացնում և հայ ժողովրդի կողմից առաջադրված դաստիարակչական խնդիրների մի ամբողջություն, ժողովրդական մարդու տիպարի ստեղծման գեղեցիկ որինակ: Ժողովրդի դաստիարակած մարդը սիրում եր ժողովրդին, ատում եր ժողովրդի թշնամիներին, վոչնչացնում եր բոլոր բռնակալներին, ստեղծում եր յեղբայրություն ու համերաշխություն բոլոր ժողովրդների մեջ և ձգտում եր հաստատել մշտական խաղաղություն:

Ժողովրդի ու հայրենիքի պաշտպանության համար Դավիթը չեր խնայում իր կյանքը: Բռնակալներին և ագրեսորներին նա «Չարդ ու կտոր եր անում», իր թուր կայծակով հնձում եր նրանց յերկրի յերեսից:

Այսպես դաստիարակեց հայ ժողովուրդը իր հերոս գավակին՝ իր Դավիթին:

## ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Այնուհետև արժե հիշել Ֆիզիկական դաստիարակությունը և մասամբ նրա արտահայտությունը «Սասունցի Դավիթ» եպոսում:

Բազմաթիվ հիշատակություններ կան եպոսի ծագման շրջանի հայ յերեխաների զբաղմունքի մասին: Դեռ վաղ պատանեկական շրջանից այդ յերեխաները ոգնում եյին իրենց ծնող-

ներին: Վորքան պրիմիտիվ եր մարդկանց աշխատանքի և արտադրութեան յեղանակները, այնքան շուտ եր վարժվում պատանին և փոքր հասակից մասնակցում իր ծնողներէ զբաղմունքին: Առանձնապէս Սասնա «Ծռերի» յերեսաները շատ շուտ եյին ընտելանում տան և զբսի աշխատանքներին: Նրանք դառնում եյին դառնարած, հորթարած, հովվի և նախորդէ ողնական, հետո՝ հովիվ, նախորդ, հոտաղ, հողագործ, նրանք պահում եյին գլգլի ու կորեկի արտերը և այլն: Աղջիկներին պատրաստում եյին տան աշխատանքի համար, սովորեցնում եյին բուրդ գգել, թեղիկ կամ քարման մանել, քարգահ, կովկիթ, բեր գնալ, լվացք անել և կերակուր պատրաստել:

Այդ շրջանի հայ յերեսաների մեջ տարածված են յեղել բազմաթիվ խաղեր, վորոնցից մի շարք խաղեր մնացել են մինչեւ այժմ: Արժե հիշատակել այդ խաղերից մի քանիսը: Մաղում եյին ճան (կոճի, վեգ), Անիի պեղումներէ ժամանակ մի տղայի կմախքի հետ գտնվել և կալն անոթ, վորի մեջ լցված են յեղել ճաներ: Յերեսաների հետ իր խաղալիքները թաղելու սովորությունը հայանի յե և ուրիշ ժողովրդների մոտ: Այնուհետեւ խաղում եյին՝ «անդուկ-պնդուկ», «սանդուխա բեր բոխչա», «թոնոցի», սրան այժմ ասում են՝ «ուշ ատում», «ճլորթի» կամ «ճղլոր»: Մաղում եյին «գունգ», «հոլ» կամ «հոլ ու կոպալ», «վիտ» կամ «պտավոդ», «Ֆոռան» սա մտրակով եյին ֆոռացնում: Հայոց պատմութեան մեջ այս «Ֆոռանը» հիշվում և յերբեմն «Շոնչան» անուէնով: Որինակ՝ Յեղնիկը խոսելով ասաղերի մասին, ասում և՛ «Իբրեւ զընչանն շրջիցին», կամ մի ուրիշը պճնասեր կանանց մասին խոսելիս ասում և՛ «այսր անդր ստէպ իբրեւ զընչանն շրջիցին»:

Տարածված խաղալիքներից եյին նաև «անիվը», անիվ գլորեցնելը կամ «կլորակը», «փայտոցիկը» կամ «տլուրը», «ճակարանքը», «տապարին» կամ «տաման», «նարտը» և ուրիշ նման խաղեր: Կային և ուրիշ ժողովրդներից փոխադրված խաղեր, որինակ՝ «ճատրակը» — հնդկական խաղ և, վորը կոչվում էր նաև «շատուրանդա», այդ խաղին Պահլավունիք ասում եյին՝ «ճատրանդ», իսկ արաբները՝ «սաթրանճ»: Այս խաղը միջին դարերում գործածվում էր Հայաստանում, կա այսպիսի արտահայտություն՝ «ճատրկաց խաղացեալ ես. ասէ՛ այո», սա վորոշ չափով նման և շախմատին:

Կազմակերպված, վորոշ ուղղություն ունեցող ֆիզիկական վարժությունները, մարզանքները հին և միջին դարերի հայերի

կենցաղի մեջ մտած տրագիցիոն սովորություններ եյին հանդիսանում:

Ինո միջին դարում հայերի մոտ վորոշակէ կերպով գոյություն ուներ «հանդիսական ուսմունքը», վորը տեղի յեր ունենում՝ հրապարակներում, ասպարեղներում, զբոսավայրերում և, վոր գլխավորն է, թատրոններում, ինչպես հիշվում է «Թատերական մարզանք»:

Ինչպես հուշները իրենց ոլիմպիադաներում հանդես եյին բերում Ֆիզիկական վարժությունների, ուժի, ճկունության, զինավարժության հմտության և արվեստի բոլոր տեսակների մըրցությունները և ամփոփում եյին այն, այնպես էլ հայերը մըրցություններ եյին կազմակերպում նավասարդյան տոներին:

Այստեղ յերիտասարդները հանդես եյին գալիս զանազան մարզանքներով, ցույց եյին տալիս իրենց շնորհքը՝ ուժի, մկանների վարժության, ճարպկության, ձիարշավի, սրախաղության, մկունդի գործածության, յերգի, բանաստեղծության և այլ արվեստների միջոցով:

Պատերազմի ժամանակ գործադրվող զենքերը հանդիսանում եյին նաև Ֆիզիկական վարժության համար գործիքներ: Այդ եր պատճառը, վոր դեռ վաղ պատանեկական շրջանից մարզական գործիքներին վարժված յերիտասարդը արդեն հմուտ զինվոր եր: Այդպիսի յերիտասարդը գիտեր սրախաղությունը, կարողանում եր վարժ կերպով՝ գործածել նետն ու աղեղը, նիզակը, մկունդը, պարսատիկը և կովի ուրիշ միջոցները:

Բազմաթիվ վկայություններ ցույց են տալիս, վոր հայերը հատուկ ուշադրություն են դարձրել ձիավարությանը:

Հ. Սարկավազը (12-րդ դար) վկայում է, վոր հայերը մանկությունից վարժվում եյին Ֆիզիկական, և այդ ամենը տեղի յեր ունենում կազմակերպված, հատուկ մարզիչների ղեկավարությամբ, վորոնք սովորեցնում եյին «խրատու», «արուեստապես»:

Սարկավազը ասում է.

«Բանդի և ձիավարութեան և աղեղնաւորութեան և այլոց զինուոց շարժականութեանց՝ առանց խրատու և ի մանկութենէ արուեստապէս վարժութեան չիք հնար տեղեկութիւն առնուլ. նմանապես և բռնամարտկութեան և այլոց հանդիսականաց ուսմանց»:

Այս պարզ վկայությունը ցույց է տալիս, թէ ինչպէս եյին

սովորեցնում ֆիզիկական վարժությունները: Այդ նույն դարում Գրիգոր Տղան մարդական խաղերի մասին այսպես է գրում՝

«Ուր կուտարաբքն ի ճակատին,  
Կամ ըմբշամարտք պատերազմին.  
Ո՛ւր ձիավարժքն ի թատերին,  
Նիզակախիրքըն վահանին.  
Ո՛ւր են նետողք նըպատակին,  
Սուսերամերկք զիսող բազկին.  
Ո՛ւր պարսաւորք ճահողակին»:

Սա վկայութիւն է այն մասին, Վոր թատրոններում, սպարեզներում և հրապարակներում այդ ժամանակ ևս տեղի էլին ունենում մրցումներ, այդ մրցումների ժամանակ հանդես էլին գալիս ուղղական և ֆիզիկական վարժությունների բոլոր ձևերն ու գործողությունները:

Պատմիչ Թովմա Արծրունին նկարագրում է այն քանդակը, Վորի վրա Գագիկ Արծրունու մի մասնայական զրոսանքն է պատկերացված, յերբ տեղի էլին ունենում բազմատեսակ մրցություններ: Այսպես է նկարագրված նրանց զրոսանքը՝

«Սուսերամերկաց յոյլք և ըմբշամարտաց պատերազմունք, անդ և գասք աւելճաց և այլոց գազանաց և անդ երամք հաւուց»: (Թ. Արծրունի. 482)

Մշտական պատերազմի արհավիրքը հիմնական պատճառն էր այն բանի, Վոր հայերը իրենց յերիտասարդներին ավելի վաղ հասակեց էլին տալիս ուղղական վարժություններ:

Պատերազմի պայմաններում գործադրվող զինքերը խաղաղ շրջանում հանդիսանում էլին հայ պատանիների և յերիտասարդների կենցաղային գործիքներ:

Հովհ. Մանգակունին նկարագրում է հայերի թատրոնը: Թատրոնը նստելու բարձր և ցածր տեղեր ունի: Բաժանված էլին կանանց և տղամարդկանց տեղերը: Թատրոններում կատարվում էլին բազմատեսակ մրցություններ:

Այդպիսի մի թատրոն կար Դվինում, Վորի մասին կան մի շարք հիշատակություններ: Արար վոստիկանապետ Յուսուփը Դվինի թատրոնի մեջ բանտարկեց Գնունիներին՝ Դավթին ու Գուրգենին, նրանց «ածան ի թեատրոնն»:

Բազրատունիք և Սյունիք նույնպես ունեյին թատրոններ: Այդ թատրոնները այնքան գայթակղեցուցիչ են յեղել, Վոր հո-

դիվորականներն էլ հաճախելիս են յեղել այնտեղ: Այդ եր պատ-  
ճառը, վոր նարեկացին, Գառնեցին և ուրիշները դատապարտում  
էին քահանաներին, վոր իրենց պարկեշտ չեն պահում և մտնում  
են թատրոնները, «մի մտցիս դու ի տունս թատերաց», կամ՝  
«աստ ի թատերս և ի հարսանիս մի մտցէ»:

Այս յերեվույթը ցույց և տալիս, վոր թատրոնը իր մեջ  
արտացոլում էր աշխարհիկ բարքերը, վորոնք ձեռնտու չէին  
հոգևորականությանը:

Չիարշավի մրցման համար հայերն ունեյին հատուկ տեղեր,  
վորոնք կոչվում էին՝ «ձիարձակարան», «ձիընթաց» կամ ձիըն-  
թացիկ ասպարեզ»: Այս վայրերին մի շարք պատմիչներ ուղղա-  
կի ասում են՝ «ասպարեզ», «կրկես» կամ «թեատրօն»: Թ. Արծ-  
րունին ասում է, վոր Գագիկ իշխանը զվարճանում էր ասպա-  
րեզում՝ «ճախք առեալ ճեմէր յասպարիսի անդ»:

Չիարշավները սովորում էին բազմաթիվ ձևեր և պրիտմ-  
ներ, վորոնք արտահայտվում էին մրցումների, խնչպես և պատե-  
րազմի ժամանակ: Վարժ ձիավորները սովորեցնում էին յերի-  
տասարգներին վարժ կերպով ձի քշել, այնպես վոր շատ դեպ-  
քերում նույնիսկ չողտագործէին սանձը: Այս վարժութունն  
անհրաժեշտ էր ամեն մի հեծվորի համար, վորովհետև պատե-  
րազմի ժամանակ նրանք պետք է կռվէին նետ ու աղեղով, նի-  
զակով, սրով՝ ողտադործելով վահանը, պարսատիկով, տեգով և  
այլն: Կովի այս բոլոր գեները գործադրվում են յերկու ձևերի  
միջոցով:

Չիարշավի մրցումների ժամանակ մրցողները ցույց էին  
տալիս ուժի, արագության և ճարպկության բազմատեսակ փոր-  
ձեր: Որինակ, արագ քշելու ժամանակ ձիավորը ցատկում էր գե-  
տին և կրկին թռչում ձիու մեջքին, կամ արշավի ժամանակ  
կռնում էր, գետնից իրեր վերցնում, և նման բազմաթիվ վար-  
ժութուններ էր կատարում:

Թուլմա Արծրունին նկարագրում է գնդակախաղի մի տե-  
սակ, վորը խաղում էին ձիավորները ձիարշավի ժամանակ նա  
ստում և՝ «Սաղս ձիընթացիկ արշաւանաց գնդակացն»:

Պետք է յենթադրել, վոր այս խաղի ժամանակ ձիավորի  
նպատակն է յեղել արշավի պայմաններում վորևէ գնդով (նետով,  
նիզակով, մականով) խփել գնդակին: Այս խաղի նպատակը այն  
է յեղել, վոր նրանք ձգտում էին պատրաստել այնպիսի հեծ-

յայնք, վորոնք կարողանային ձիրնթացի պայմաններում գոյութիւն ունեցող գենքերով հարվածել հակառակորդին:

Շատ բնական է, վոր այդ վարժութիւնները պետք և համապատասխանելին իրենց ժամանակի հեծեկազորի ունեցած գենքերի գործածութիւնը:

Գոչի վկայութեամբ հայանի յե, վոր մրցումները ժամանակ յերբեմն ճարպիկ ձիավարժի յերկարը արձակ թողնում էլին հրապարակի մեջ, իսկ հանդիսականները խրտնեցնում էլին ձիուն, ձիավորը կարողանում էր համեմել և ցատկել ձիու մեջքին:

Հայ պատմիչները յերբեմն խոսում են առանձին իշխանների, նախարարների նշանավոր ձիերի մասին և ցույց են տալիս հայերի հմտութիւնը ձի ընտրելու և խնամելու մեջ:

«Սասունցի Դավիթ» եպոսի մեջ նույնպես հիշվում են «Մհերի տան ձիերը» կամ «Ջոջանց տան ձիերը»:

Հայերի մոտ առանձնապես հարդի յեն յեղել սև ձիերը: Պատահական չե, վոր եպոսի մեջ «Սևուկն» և, վոր վորը գետին չի տալիս և մի ակնթարթում Չենով Ոհանին հասցնում է Դավթի կովին:

Սև ձիերը գովարանվում էլին Գողթան յերգիչները կողմից-

«Սեաւն քանց գիշեր, արագավազ ու ահեղ քանց փութորիկ»:

Նույն յերգիչները յերգում էլին Արտաշեսին, վորը հեծած էր «Ի սեաւն գեղեցիկ» և այդ ձին թռչում էր՝ «որպէս զարծուի սրաթեւ ընդ գետն»:

Լավ ձիավորը լավ ձի յեր բուծում. յեթե կար այնպիսի ձիավոր, վորը կարողանում էր՝ «նման թռչնոց յերկարն հեծանէր», ապա կար և այնպիսի ձի՝ «թեթեւ առաւել, քան զՊիլգասոս, երազութեամբ անբաւ, զորս ոչ կրկրակոխ», այլ օդագնացս համարէին»:

Ահա թե ինչպես են գնահատում մեր պատմիչները լավ այրուձիուն:

Միջնադարի հայ պատանիներն ու յերիտասարդները վարժվում էլին բազմաթիվ խաղերի և մարզանքների միջոցով: Նրանք կրկնկտրով մարզանքներ են ունեցել՝ «Բազում շարք մարզանաց» կամ «խմբովի մարզանք»:

Հիշատակվում են մարզանքների և խաղերի այսպիսի անուններ՝ հասիլառիկ, պահմտոցիկ, վազ կամ վազք, ծանրաբար-

ձություն (ծանր իրերի վերցնել կամ ծանր ատլետիկա), լող, ըմբշամարտ կամ ըմբշամարտ կռիվ, ըմբշական մրցություն, գիրկընդխառն կռիվ, վոլբին հետազայում ասում էյին կոխ, գյուլաշ և այլն:

Այնուհետև կար կուխամարտիկ կամ բնամարտիկ, ուրիշ խոսքով ասած բունցքամարտ, դա մի տեսակ բոքսախաղ էր, առանց հատուկ ձեռնոցների, և այդ խաղը վորոշ կանոններով չեր սահմանափակում մրցողների շարժումներն ու հարվածները:

Հայերի մեջ շատ տարածված էր «արշավան» կոչված խաղը, իսկ վոմանք այդ խաղը անվանում են՝ արշավանք, ընթաց, ընթացություն և այլն:

Այս խաղն արտահայտվում էր վաղքով՝ յերկար տարածություն անցնել տուկուն վաղքով և կարճ տարածություն կտրել արագ վաղքով:

Այս խաղի գոյությունը հետաքրքիր վկայությամբ հաստատում է պատմիչ Հովհ. կթ. (10-րդ դար), նա գովում է Սմբատի վորդի Աշոտին, վորը հայտնի յե յեղել, վորպես «մրցող արագավաղի»: Աշոտի մասին պատմիչը գրում է.

«Բազում ընթացութիւնս և նահատակութիւնս քաջութեանց ուժեղակ մրցութեամբ ցուցանէր»:

Ֆիզիկական վարժությունների մրցությունները հայերի մոտ կենցաղային բնույթ էյին կրում: Մրանք տեղի էյին ունենում տոների, հարսանիքների ժամանակ և բազմաթիվ այլ առիթներով:

Վաղքի մրցության բազմաթիվ ձևերի մասին ունի վկայություն և Մ. Գոշը: Գոշի «Դատաստանագրքի» մեջ կա տեղեկություն, վոր հայ մանուկները «գրաւ» կգային իրար հետ՝

«Ի բարձանց ի խոնարհ վաղել», կամ՝ «Ընդ դժուարս և ընդ ձիւնս և ընդ այլ ինչ այսպիսիս գնալ»:

Կիրիկիայի որինագիրքը նախատեսում էր տուգանք և պատիժ այն մարդկանց նկատմամբ, վորոնք խախտում են խաղի կանոնները, կամ չափազանցություններ են մտցնում խաղի մեջ:

Այդ որինագրքում ասվում է, տուգանել նրանց, վորոնք՝ չի բարձր տեղաց ի վայր վաղելու» կարգը կխախտեն:

Այս բոլոր վկայությունները ցույց են տալիս վաղքի վարժությունների և մրցությունների բազմատեսակությունը՝ մի կողմ

մից, և մյուս կողմից՝ վազքի վարժությունները մասսայական բնույթն ու նրանց տեղը հայերի ֆիզիկական դաստիարակության սիստեմում

Մարզական մրցությունները տեղի ելին ունենում շատ կազմակերպված: Մի խումբ մարզիչներին կազմվում եր մրցողներին գնահատող հատուկ հանձնաժողով, վորը ունենում եր իր դեկավարը, վարպետը, կամ հանձնաժողովի նախագահը, սա կոչվում եր «մարտագիր» կամ «հանդեսագետ»: Վերջինիս հրամանով կարող եր սկսվել մրցումները. սա եր գնահատում մրցողներին, հաղթողին հանձնում եր պսակը կամ նվերները, դադարեցնում եր մրցումները, յեթե կարգի խախտում եր տեղի ունենում և այլն: Մրցության մեջ հաղթող մարզիկը ստանում եր նվերներ և պսակներ: Հաղթության դեպքում մարտագիրը պսակը ձեռքին մտնում եր մարզիկին և կարճ գովասանական խոսքերից հետո հանձնում եր պսակը:

Սարգիս Մեկնիչը (12-րդ դար) հիշում և, վոր հաղթողը մտնում եր մարտագրին և հպարտությամբ, ինչպես ինքն և ասում՝ «բարձրագլուխ դպսակն պահանջեց», իսկ պարտվողի վիճակը, ինչպես վկայում և կողրացին, մահու պատժից ել վատ և յեղել:

Ծանրարարձությունը կամ ծանր իրեր վերցնելը հին և միջին դարերում հայերի մեջ շատ տարածված մարզական վարժություններից մեկն էր: Յերբեմն այդ մրցության մոլի հետևորդները ռեկորդներ սահմանելու նպատակով չափազանց ծանր իրեր ելին վերցնում, այդ պատճառով մրցությունը վերջանում եր ախուր հետևանքներով:

Այդ մասին Մ. Գոշը գրում և՛

«Մովոր են երխտասարգք վայրպար զմիմեանս շարժել՝ բառնալ ինչ ծանուեսս, որպէս քարինս և այլն այսպիսիս»:

Շատ անգամ պատժում ելին մարդկանց՝ «ի պատճառս վայրպար գրաւուց». տուգանում ելին մրցության մեջ փխստող չափազանցություններ մտցնողներին:

Մրցման հրավիրողը ինքն եր սահմանում վերցվող իրերի քաշը՝ «եթե գրաւով ծանտը իրք վերցնեն կամ ուժփորձուկ այնեն...» հատկապես անչափահասների, շատ յերխտասարդներին կատմամբ, այդ դեպքում ևս հրավիրողը պատժվում եր, իսկ փխստ-

ների դիմաց զբաժնով եր հատուցում, ըստ Կիլիկիայի որինազրքի:

Ծանրաբարձության կամ ծանր իրեր վերցնելու վարժության մասին հայոց պատմության մեջ կան բազմաթիվ հիշատակութիւններ: Հիշվում են առանձին անձնավորութիւններ, մարդկած մարդիկ, վորոնք ահռելի ուժ են ունեցել և նրանք հոչակվել են վոչ միայն հայերի շրջանում, այլև ուրիշազայում—հույն մարդիկները մեջ: Մարդկան բազմաթիվ տեսակի վարժութիւնները խթան են հանդիսացել մարմնի բազմակողմանի մարզմանը, այլ խոսքով ասած՝ այս բոլորը նպաստել են մարմնի հարմոնիկ զարգացմանը:

Վերը հիշված մարմնամարզության և սպորտի տարրեր տեսակներն ու ձևերը ցույց են տալիս, վոր հայերը մարզում ելին իրենց մկանները, ձեռքերն ու վոտքերը, ձեռք ելին բերում արագաշարժութիւն, ճկունութիւն, տոկունութիւն և ուժ: Այս բոլորը հիմք եր հանդիսանում նրանց դառնալու լավ ձիավորներ, նետաձիգներ, նիզակակիրներ, ծանրաբարձներ, վազողներ, թըռչողներ և այլն:

Մենք ասինք, վոր մեր պատմիչները հիշում են շատ մարդկանց, վորոնք բազմակողմանիորեն մարզված են յեղել:

Ոլորենացին գրում ե, վոր Վարագդատը՝ «վաղեաց զԵփրատաւ առաւել քան զզակոնացին Քիոնեայ վազան քսան և երկուց կանգնոց չափ»<sup>1)</sup>, այդ յերևույթը, ասում ե հեղինակը, հիշեցրեց Աքիլեսին Սկամանգրոս գետի վրայով թոչնելիս: Նույն հեղինակը հիշում ե Վարագդատին, վորպես առյուծներ սպանողի, ուրիշ պիտաղայում հույն ըմբիշների կողմից հարզված ուժի տեր մարտու և քաջ նետաձիգի (Սոր. Գ. Խ.):

Սերետը հիշում ե Սմբատ Բագրատունուն, վորպես լավ մարզված և աճազին ուժի տեր մարդու: Այս Սմբատը ձիու վրա նստած, կառչում ե ծառի հաստ ճյուղից, վոտներով պինդ բռնում ե ձիու իրանից և ձգվում ե դեպի վեր, գետնից պոկելով ձիուն: Այս արտակարգ յերևույթից, ինչպես վկայում ե Սերետը, ամենքը՝ «հարեկ լինէին ի զարմացմանէ»: Կասկած չկա, վոր այս նկարագրութիւնների մեջ չափազանցութիւններ կան, բայց դրանք չեն ժխտում, ընդհակառակը՝ հաստատում են հին հայերի

1) Քոանյերկու կանգունը հույների մոտ թոնիչքի նախատեսնված սեկոր-դուլին ամենաբարձր չափն եր:

Ֆիզիկական դաստիարակութեան բարդ և բազմախորամանի լինելու հանգամանքը:

Ապացույցներէից մեկն էլ կարող է լինել այն, վոր հայերը ունենալով ֆիզիկական վարժութեաններէի հատուկ ձևեր ու յեղանակներ, սրանց ուսուցման առանձին պայմաններ, միաժամանակ ունեյին մրցման հատուկ կանոններ:

Որինակ՝ յեթե մրցողները ծանրութեան պիտի վերցնեն, նրանք հաշվի յեն առնում մրցողներէի քաշն ու հասակը, նույնը վաղքի ժամանակ, այս դեպքում չափվում էր նաև վաղողներէի սրունքները: Հովհաննես պատմիչը վկայում է, վոր Աշոտը սասարեղի վրա, մրցութեանից առաջ համեմատվում է չափվում էր իր մրցակիցներէի հետ. «Որք կենօք և աւուրբք զուգահաւասար նմա էին», ասում է պատմիչը:

Մեր կողմից հիշատակված բոլոր փաստերն ու վկայութեանները ցույց են տալիս, վոր ինչպես մտավոր կրթութեանը հայերի մոտ տարվում էր վորոշ ուղղութեամբ, ուսումնական դասագան վայրերում համապատասխան ծրագրերով, այնպես էլ ֆիզիկական դաստիարակութեանը մի շարք վայրերում ունեցել է հանդիսական կազմակերպված բնույթ: Ինչպես Հ. Սարկավազն է ասում՝ Ֆիզիկական վարժեցնում է յին՝ մարդկանց մանկութեանից, սովորեցնում է յին՝ «խրատու», «արուեստապես», սպորտի և զինավարժութեան բոլոր տեսակները հատուկ ձևերով ու մեթոդներով:

Հայերի ֆիզիկական դաստիարակութեան և զինավարժութեան արտահայտութեանները խիստ ակնառու յեն «Սասունցի Դավիթ» եպոսի մեջ: Հմուտ, վարժված ձիավորներ են՝ մեծ և փոքր Մհերները, Դավիթը, Սանասարն ու Բաղդասարը, Չենով Ոհանը, քոռի Թորոսը և ուրիշները: Սրանք մարզված, վիթխարի ուժի տեր մարդիկ են, վորոնք գիտեն ամենակատարյալ կերպով գործադրել իրենց ժամանակի բոլոր զենքերը՝ նետն ու աղեղը՝ պարսատիկը, տեգը, մկունդը, նիզակը և սուրն ու վահանը:

Եպոսի մեջ հիշվում է, թե ինչպես «Չոջանց տան» մեծն ու պատիկը վարժված են յեղել զենքերին, պահել են լավ ձիեր ու վարժվել նրանցով, նրանց կենցաղի մեջ է մտել ֆիզիկական դաստիարակութեանը: Եպոսում հիշվում է, վոր Մհերն ու Դավիթը սովորութեան են ունեցել կովից առաջ իրենց սրերը պողպատե սյունի վրա փորձել. առասպելացած այդ սյունը ուրիշ

բան չէր, քան այն ձողը, վոր վարժության ժամանակ նրանք կտրում էին սրերով:

Հոյակապ ձիավորի և սրախաղացի պատկեր ե հանդիսանում Դավիթը: Մանուկ հասակից գառնարած լինելով՝ նա զբաղվում էր վորսորդութեամբ, չճոկելով իրարից ուն ու նապաստակը, դառն ու աղվեսը:

\* \* \*

Հին հայերի մտավոր և ֆիզիկական դաստիարակութեան մասին բազմաթիվ ուրիշ տվյալներ ու վկայութեաններ կան անցյալ դրականութեան մեջ, մեր պատմիչների ու հիշատակագիրների մոտ, մեր ձեռագրատանը, պարբերական մամուլում և արխիվներում:

Այս բոլորը կարոտ են ուսումնասիրութեան, վերամշակման և, վոր հիմնականն է, իրենց մարքսիստական լուսարանութեանը:



Պատիմագիր՝ Մ. Ստեփրոսյան  
Սրբազրիչ՝ Մ. Հախնազարյան  
Հանձնված և արտադրության 16/VIII  
Ստորագրված և տպագրության 25/X  
Գլավխտի լիազոր № Ն. 2904, պատվեր 693, տիրաժ 1000

---


Պետական Համալսարանի Հրատարակչության տպարան, Յերեվան

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0014164

ԳԻՆԸ 1 ՌՈՒԲ. 30 ԿՊՄ. 134.



11957

А. МОВСИСЯН

**ОЧЕРК ОБ ОБРАЗОВАНИИ  
ДРЕВНИХ АРМЯН**

На армянском языке

ИЗДАТЕЛЬСТВО ЕРЕВАНСКОГО ГОСУНТА